

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՐՈՒՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՁԱՐԽԱՅԻ ՔԱՀԱՆԱՑ ԿԵՋԻՒՐՆԱՆ

Վ Ա Ր Պ Ա Վ Ա Ո

Ա. ՏԱՐԻ

ՇԱՐԲ, 24 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 17

Ներկայ թիւը սովորականէն 4 երես աւելի կը պարունակէ, օրուան այժմեական նիւթերու առատութեան և կարեւորութեան պատճառով:

«ՏԱՃԱՐ», Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արաստահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փաւա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պէշիքթաւ, Հայոց եկեղեցի

درسمادنده بشکلاشده ارمفی کلیسایسنده (داجار) فرتمی مدیری پاپاس زاروماو

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
Զարմաթըրլար, Յակոբեան խան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՏԱՐԱԹ, 24 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Վարդավառ. ԶԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ —Յիսուս եւ Աւետարանի քարոզութիւնը, ՍՈՒՐԵՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ.—ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, «Սրբազան Ներշնչութիւնը», ԱԿԻԼԻՆԷ.—ՄՈՌՈՆԻԱՆ ԷԶԵՐ, Նաւասարի առաւօտը, Ե. Ե. Գ.—Լեռներ՝ Թաքոր եւ Հերմոն, ԲԱՐԳԵՆ Վ.—Սիրմնական Տէրութիւնը (շար.) ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ —Ս.ԶԳԱՅԻՆ ԿԵՍԱՆՔԸ, Փակում Բարերդի առաջնորդարանին.—Միթիկի խնդիրը.—Ծիսական.—Եկեղեցական բարեկարգութիւն Հայ Եկեղեցւոյ.—Ժողովոց որոշումներ, եւն.:

Վ ԱՐԴԱՎ ԱՌ

Հին, հին, նախաքրիստոնէական դարերու, դիւցազնական շրջանի հով մը կը շնչէ կարծես. — Վարդավառ: Տօն մը գիւյ և գիւյահեաց փառքին նուիրուած, աշխարհախումբ տօն մը ամանորի խրախճանութեանց, հայկական տարեգլուխի՝ Աւելեաց ամսոյ օրերուն, Օգոստոսի սկիզբները, այնպիսի ժամանակ մը երբ «Հայոց բարձրաւանդակներուն վրայ գարնանային զովութիւն կը տիրէ» (*), երբ վարդի եղանակը անցած չէ տակաւին, և Հայերը վարդեր կը նուիրէին գեղեցկութեան գիւյահին, ոսկեծղի, վարդամասն Աստղիկին և անոր սի-

րելի վահագնին մեծի, որու ծնունդը երկնքի և երկրի երկունքէն առաջ էր եկած, որ «հուր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեգակունքը»: Վահեւանեան տօնն էր այն, որ կը խմբուէր ի Տարօն (*), որուն մասնակցութեան կը փութային Հայոց աշխարհի ամէն կողմերէն, ճիշտ ինչպէս հիմա Մշտ Ս. Կարապետը ժամագրավայրը կ'ըլլայ մերձակայ և հեռաւոր գաւառներու բոլոր բարեպաշտ հոգիներուն, նաև հին հաւատքի, հին աւանդութիւններու ջերմ պահպանողներուն, որ անդիտակից, մեքենական ճշտապահութեամբ մը, ժամանակի հեռաւորութիւններուն մէջէն, միմիկ, արիւնոտ դարերու արհաւիրքներէն իսկ, գրեթէ իր նախնականութեամբը մինչեւ մեզի հաս-

(*) Հ. Դեռնդ Ալիշան, Հին Հաւատք Հայոց:

(*) Մ. Թադիսդեանց, Սոս և Սոնդիպի:

ցուցեր են վաղնչական օրերու այդ բնատոհմիկ սովորութիւնը :

Ժամանակի գեղեցիկ զուգագիծ պութեամբ մը, կ'աւանդուի թէ նոյն ինքն Ս. Գրիգոր, Հայոց Լուսաւորիչը, կործանելէ ետքը դից և դիցունհաց արձանները, — որ յետին դարերու մէջ Յունաստանէն մտցուելով, առիթ տուեր էին նախնի պարկեշտ զգացումներուն և պաշտամունքին տեղ մտցնելու հետութեանց զգացումներ և պաշտամունք —, հրամայած է ամառուան այդ պայծառ օրերու ամառնորային տօնին տեղ հաստատել փառայեղ տօնը Յիսուսի Պայծառակերպութեան, որ խառնուած ազգային հին աւանդութիւններու, հագեր է այլ ևս գերազանցօրէն ազգային հանգամանք, և կը տօնուի մեծահանդէս բոլոր Հայերուն մէջ, ու կը լեցնէ ամէն Հայու սիրտ անուշ զգացումներով : Վարդավառի օրուան մէկմէկու վրայ ջուր սրսկելու սովորոյթը պիտի կրնա՞նք հասցնել ըստ ոմանց մինչեւ Զրհեղեղի յիշատակութեան, և աղանի թոցներն ալ նոյեան աղանիին : Թերեւս իրաւունք ունին այդ կարծիքն յայտնողները. իրողութիւն է թէ ատկէ տարբեր բանաւոր մեկնութիւն կարելի չէ գտնել այդ աղուոր սովորութեան, որով Վարդավառը միութեան գիծը կը դառնայ դիցապատական, Ս. Գրական և Բրիստոնէական ժամանակներու բարբերուն և աւանդութեանց :

Եւ հիմա, մինչ ամանորային տօնի սովորոյթները կորուսեր են իրենց նշանակութիւնը Հայուն համար, որ մեքենական աւանդապահութեամբ մը կը հետեւի ատօնց, Յիսուսի Այլակերպ-

պութիւնը կու գայ տալու ամենաբարձր դաս մը, զոր լաւ ըմբռնելու ճիգ մը պէտք է ընէ ճշմարիտ Բրիստոնէան :

Յիսուսի եռանդուն գործունէութեան օրերն էին : Երկնաւոր Վարդապետն սկսած էր հաւատքի, յոյսի և սիրոյ փրկարար սկզբունքները ծաւալել : Հրաշալի գործեր կը կատարէր Աստուածամարդը, երկնքի թագաւորութեան հեռանկարը կը պարզուէր հրէական աշխարհին մէջ, որ սակայն Մեսիայի հրէական ըմբռնումով չէր կրնար նիւթականէն վեր բան մը տեսնել : Եւ ճիշտ այդ պատճառով էր որ նոյն ինքն Առաքեալներուն մէջ վէճեր սկսեւ էին ծագել թէ ո՞վ պիտի ըլլայ գերագահ՝ մեսիական թագաւորութեան մէջ : Այդ ժամանակներուն էր որ Յիսուս կը ծանուցանէր անոնց՝ մերձաւորութիւնը տխուր օրերուն, անձնազոհութեան գերագոյն ժամուն, որ ճշմարիտ նախատօնը պիտի ըլլար վերջնական յաղթանակին : Գողգոթայի դադաթին վրայ բարձրացող խաչի մը, — չարանքի գործիքի մը — սրտմաշուք հեռանկարովը հմայաթափ՝ Յիսուսի աշակերտներէն ոմանք գուցէ պիտի խախտէին իրենց հաւատքին մէջ : Աստուածային էակը բացայայտօրէն հասկցուցած էր անոնց. «Եթէ որ կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ» : Դիւրին չէր այս : Սրտերու ամբաստանումին, հոգիի զօրացման պէտք կար : Ուստի Յիսուս հետը առած երեք առանձնաշնորհեալ աշակերտները՝ Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս, որոնց սրտի և մտքի բարոյական տրամագրութիւնը կրնար մեծ ազդեցու-

թիւն գործել իրենց աշակերտակիցներուն վրայ, վեր կը բարձրանար, լեռներէն վեր, աղօթելով:

Լեռները, ապականուած մթնոլորտէ, երկրային ճախճախուտքէ վեր այդ բարձրութիւնները, մասնաւոր նշանակութիւն մ'ունեցած են միշտ մարդկութեան համար: Սաղմոսերգուն մարդկային սրտի ճշմարիտ թարգմանը կ'ըլլայ գոչելով. «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեացէ ինձ օգնութիւն»: Այս զգացումն ընդհանուր է: Եթէ Հրեան ունեցաւ իր Սինա լեռը ուրկէ Մովսէս տասը պատուիրանները բերաւ, Յունաստան ունեցած է իր Ողիմպոսը՝ գից և գիցազանց բնակարան, Հնդկը՝ իր Հիմալայան, և Հայը՝ իր Մասիսը, «Քաջ» երու բնակավայր:

Եւ Քրիստոս վեր կ'ելլէր սուրբ լեռնէն, անմատոյց, ամպածրար բարձունքի մը ամենամաքուր մթնոլորտին մէջ՝ աղօթելու, և իր ընտրեալ աշակերտներուն երեւալու իր փառքով, իր աստուածային հոյակապ տեսիլով: Այդ երկնաբերձ սուրբ լեռան վրայ Յիսուս իր մարդկային քուրձերուն մէջ կ'արտափայլի իբրեւ Սատուծոյ էութեան բուն պատկերը:

«Եւ ի կալն նմա յաղօթս, եղեւ քեսիկ երեսաց նորա աշակերտ, եւ փոխեցաւ հաւնդերմ նորա եւ եղեւ սպիտակ փայլուն:» (Ղուկ. Թ. 29):

Մատթէոս աւելի կը մանրամասնէ՝ գրելով. «Անոր երեսները արեգակի նման եղան և հանդերձներն ալ լոյսի»:

Այսպէս, Յիսուս աղօթքի և ճրջմարտ երկրպագութեան պահուն կը փայլի արեւէն աւելի պայծառ, և

երկինք ու երկիր կը մասնակցին իր փառաւորման: Յիսուսի աղօթքին երկինք կը խոնարհի: Առաքեալներէն զատ որ երկրի ներկայացուցիչներն էին, երկնքի հոգիներու ներկայացուցիչներն ալ՝ Մովսէս և Եղիա՝ հին սնտեսութեան մարգարէները, կը գտնուէին:—

«Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ Եղիա, երեւեալ փառօք, եւ ասէին զեղիցն նորա զոր կ'ստանայոց երթորուսադէմ:»

Այս չնաչխարհիկ ժողովին կը նախագահէր Հայրն Աստուած, և յուզուած նիւթն էր խաչափայտին վրայ կատարուելիք քաւչական մահը: Բնական է ուրեմն որ այս փառայեղ տեսիլէն չլացած, չլմորած Պետրոսին խնդրանքը՝ «բարւոք է մեզ աստ լինել», մերժուէր, քանի որ այդ առաջարկը ինքնասիրութիւն կը բուրէր. մինչ Քրիստոսի գերերկրային փառքին մէջ իսկ կը ցոլացուէր անոր վսեմ անձնուրացութեան գործը, կորսուած մարդկութեան փրկութեան համար Աստուածամարդուն կատարելիք գերագոյն անձնազոհութիւնը:

«Եւ մինչդեռ նա (Պետրոս) խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցա. ձայն եղեւ յամպոյն և ասէ. Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք:»

Անոր մտիկ ըրէք:

Յորդանանի մէջ նոյն ձայնն է որ Քրիստոսի մեսիայութիւնը կը հըռչակէ:

Անոր մտիկ ըրէք: Ո՛վ աշխարհային կիրքերու և մոլորութիւններու մէջ ընկղմած, աղտոտութիւններու

մէջ թաւաւած մեղաւոր մարդկու-
թիւն, մտիկ քրէք Անճճ որ միշտ
բարձր է, միշտ պայծառ, Անճճ որ
լոյսն է աշխարհ եկած, որ տիեզերքի
ճառագայթներուն ստեղծողն է, որ
ճառագայթարձակ, յաւիտենական
ճշմարտութիւններու գերագոյն աղ-
բիւրն է: Բացէք ձեր փակուած աշ-
քերը՝ տեսնելու համար թէ Ան իր
փառքին մէջ իսկ, տառապած մարդ-
կութեան քառութեան վրայ կը մտա-
ծէ: Ականջ գրէք անոր փրկարար
վարդապետութիւններուն, որոնց հի-
մը կը կաղմեն Հաւաքը՝ խորունկ ու
գիտակից, Յոյսը՝ զօրեղ ու հաստա-
տուն, Սէրը՝ անշահախնդիր, ճշմա-
րիտ, անձնուէր: Թօթափեցէք ինչ որ
կայ ձեր վրայ գձուձ և աղտեղի,
մաքրուեցէք մաքրեան կիրքերու սևու-
թիւններէն, հեռացէք փոքրոգութիւն-
ներէ, յոյլ և ծոյլ կեանքի մը հեշ-
տախտութիւններէն, նաև ատելու-
թեան, նախանձի չար մղուններէն,
վեր բարձրացուցէք ձեր նայուածքնե-
րը՝ զերծ մնալու համար երկրաքարշ
կաշկանդումներէ, և երկրային խա-
բուսիկ, ախտաւոր վայելքներէ:

Անտարբեր և սկեպտիկ մարդեր,
որ հաւատք չունիք հոգեկան վայելք-
ներու և աստուածային ճշմարտու-
թիւններու վրայ, ելէ՛ք հաւատքի
Սուրբ Լեռը: Ապականած և աղտո-
տութիւններու մէջ տապալակող թըշ-
ուառ արարածներ, ճշմարիտ առող-
ջութիւնը, ճշմարիտ մաքրութիւնը,
կազդույրը գտնելու համար ելէք Սըր-
բութեան Բարձունքը: Նոյն ինքն դուք
եղէք բարձր ու վեհ, ու մաքուր. դուք
ինքզինքնիդ յարգարեցէք իմանալի
Թափօրներ, կրօնական ու բարոյական
ամուր հիման մը վրայ հաստատուած,

և այն ատեն, մեղքերու ամենածանր
շղթային իրերաբարդ օղակներէն ա-
զատուած, պիտի կրնաք լսել գորո-
վագութ, սրտապնդող, երկնային Ձայն
մը. — «Դա՛ է որդի իմ սիրելի»:

ՋԱՐՄԱՅԸ ՔԱՆԱՆԱՅ

Յ Ի Ս Ո Ւ Ս

Ե Ի

ԱԻԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆԸ

Ա.

Պապեստինի երկիրը «ծարաւուտ» էր
առաջին դարուն. մահացու հով մը՝ վա-
լով կ'անցնէր անոր վրայէն և կ'ամպոնէր
զայն: Բայց ա՛նա այդ քարացած երկրին
վրայ նոր տունկ մը կ'երեւի, և կ'ըլլայ
այն հոկայ և հիանալի ծառը որ կը կոչ-
ուի Բրիստոնեռփին: Բրիստոն Կը խօսի և
կ'աւանտէ Աւետարանը՝ օրինաց վարդապետ-
ներուն և դպիրներուն աշխարհին մէջ, ո-
րոնք գործքով փրկութիւնը և մեղքական
փառաւոր թուականի մը մօտալուտ գա-
լուտը կը քարոզէին: Ինչ էին Բրիստոնի
քարոզութեան յատկանշական գիծերը: Այդ
գիծերը տմբողջովին պահուած են չորս Ա-
ւետարաններուն մէջ, և հակառակ ոմանց
յանուն գիտութեան և քննադատութեան
յայտնած քմածին կարծիքներուն, անոնք
անջնջելի պիտի մնան իբրեւ հիմը քրիս-
տոնէական կրօնքին:

Այդ տիեզերական կրօնքը, — քրիս-
տոնէութիւնը, — նոյն հրէական և քիչ ժա-
մանակ վերջ քաղաքակրթեալ աշխարհի
ազգաց կրօնքներուն տեղը կը սկսի գրա-
ւել: Պատմութեան մեծ օրէնքն է այս որ
կը կատարուի: Բրիստոնէութիւնը անշուշտ
ունէր իր fondement: Բրիստոնէական
վարդապետութիւններու (dogme) ձեւա-
կերպումին պատմութիւնը շատ հին է. ա-
նիկա իսկապէս Բրիստոնէ առաջ սկսած է,
և կը շարունակուի տակաւին: Բայց Յի-
սուս ձեւակերպումի (formation) վիճակին
մէջ եղող այդ կրօնական շարժումն մի՞ծ

մղում մը տուտաւ. անիկա իսկապէս իրե-
րու նոր կարգ մը ստեղծեց, և մէկ խօս-
քով Քրիստոնէութեան հիմնադիրը եղաւ:

Նախ պէտք է ընդունինք թէ Քրիստոս
չառ մը կարեւոր խնդիրներու մասին իր
ժամանակակիցներուն գաղափարները որ-
դեգրեց: Անկարելի է դիտնալ թէ իր ժա-
մանակի դպրոցներէն որո՞ւն կը պատկանի
ան, բայց կրնանք ըսել թէ անոնցմէ շատ
մը գաղափարներ փոխ առած և գործա-
ծած էր: Արդարեւ անիկա մեծ բան ստու-
ցած է Փարիսեցիներէն: Նախախնամութեան,
և մարմիններու յարութեան վարդապե-
տութիւնը անոնցմէ ընդունած է իսկապէս:
Թիչէնք նաև թէ Քրիստոսի մեկնութիւնը
(exégèse) երբեմն մեծ նամանութիւններ ու-
նի՝ իր ժամանակակիցներու մեկնութեան
հետ: Զոր օրինակ, կրթ կ'ուզէ սպացու-
ցանել թէ մեռելոց յարութիւնը հնգա-
մատեսներն մէջ կը գտնուի:⁽¹⁾ Սատանա-
ներու և չար ոգիներու մասին ունեցած
գաղափարներն ալ նոյն են իր ժողովուրդի
գաղափարներուն հետ: Վերջապէս Յիսուս
իր ամբողջ կեանքին մէջ հրեայ ապրեցաւ.
չարունակ կատարեց Սինակոկի պաշտա-
մունքը, և իր մահուան նախընթաց օրը
իր աշակերտներուն հետ Զատիկը կատարեց:

Սակայն Յիսուսի ուսուցումներուն մէջ
երկու հիմնովին նոր գաղափարներ կան,
որոնք անժխտելի ինքնատուութիւն (origi-
nality) մը ունին: Իր ժամանակակից ռաբ-
բիական ուսուցումը սա՛ կրկու բառերուն
մէջ կը խտանար: Ամբողջ օրէնքը կա-
տարեցէք, և սպասեցէք Մեփիաին որ
թագաւորն է կրկրի: Յիսուս կը պատաս-
խանէ. Դուք հաւատքով պիտի փրկուիք,
և ես եմ Մեփիան, որ պէտք է խաչուած
մեռնի: Այս խօսքերով կը ջնջէ գործքով
փրկուելու գաղափարը, կրկրաւոր Մե-
փայի մը սպասելու յոյսը, և անոնց տեղ կը
կը հաստատէ հաւատքով արդարանալու
և հոգեւոր ու երկնային Մեփայի մը գա-
ղափարը: Գալով Աստուծոյ հանդէպ Հրե-
եաներուն ունեցած վերաբերումին, արդա-
րեւ չափազանց տարօրինակ... Աստուած

պահանջատէր մըն էր, որուն հետ հաշիւ
կը տնտեսէին շարունակ, և այդ հաշուե-
տուութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ար-
տասանուած աղօթք մը, մաքրութիւն մը
և սրբազործուած ողորմութիւն մը:

Յիսուս բոլորովին հակառակը կը խօսի
և կը գործէ. անիկա կը պարտաւէ փա-
րիսեցիական խղճագիտութիւնը (casuist-
ique), և ցոյց կուտայ թէ Աստուած չա-
խորժիր բնաւ արտաքին մաքրութիւններէ,
այլ աւելի ներքինը կը փնտռէ, և իրրեւ
«հայր» կը վարձատրէ ներքնապէս մաք-
րագործուածները միայն: Աստուծոյ տըր-
ուած այս հայր անունը, անմահութիւն
չուէր Յիսուսի ժամանակակիցներուն. բայց
նա միայն կը ճանչնար այդ անունին իսկա-
կան իմաստը: Աստուած հայր է և ո՛չ թէ
անողոք պահանջատէր մը. անիկա կը շը-
նորէ պարտքերը, կը ներէ իր զաւակնե-
րուն մեղքերը: Յիսուս այս կերպով չի
ջնջեր սակայն օրէնքը⁽¹⁾, ընդհակառակն
աւելի օրինապէս կ'ուզէ ըլլալ, ընդդիմա-
նալով այն աւանդութիւններուն որոնք
խոչընդոտ կը հանդիսանան օրէնքի լրու-
մին: Անիկա կ'ուզէ որ կարեւորութենէ
դուրի նկատուին ա՛յն բաները որոնք
փրկութեան համար երկրորդական են, ինչ-
պէս՝ զոր օրինակ՝ անլուսայ ձեռքով հաց ու-
տելը, շաբաթ օրը հասկ կորդելը և օրէն-
քին հրամայած պատուէրները կատարելէ
տուած սեղան նստիլը և այլն⁽²⁾:

Ուրեմն ի՞նչ պէտք է ընել, ըստ Յիսու-
սի, Աստուծոյ առջեւ արդարանալու հա-
մար: Նախ պէտք է գիտնալ թէ չարին
կեղրոնը սիրտն է, թէ շնութիւնը և
սպանութիւնը սրտին մէջն է. և պէտք է
զղջալ: Զղջումի կոչը ուղղուած է ամէ-
նուն, բոլոր մարդոց և նոյնիսկ Սամարա-
ցիներուն: Ամէնքն ալ կանչուած են, ա-
մէնքն ալ կրնան զղջալ և արժանանալ
Աստուծոյ արքայութեան:

Հաւատքը, որ երբեմն Քրիստոսի հա-
մար կրօնական իրի մը հանդէպ պարզ գա-
ւանանք մըն է, մանաւանդ իր քարոզու-

(1) Մատթ. ԻԲ. 31 եւ շար:

(1) Ղուկ. ԺԱ. 42:

(2) Ղուկ. Ժ. 8:

թիւններուն մէջ գործ մըն է, վատահու-
թեան գործ մը: Անիկա անբաժանելի է
կեանքի փոփոխումին հետ: Գալով Աստու-
ծոյ թագաւորութեան, Գրիստոս կը հո-
գիացնէ (spiritualiser) և հաւատացեալնե-
րուն սրտին մէջ կը գնէ զայն: Այդ թա-
գաւորութեան մէջ մտնելու համար հա-
ւատք և վատահոթիւն կը պահանջէ: Աս-
տուծոյ արքայութիւնը իր զաւակներուն
է, անոնց որոնք չեն պատճառաբաներ,
այլ երկնաւոր հօր կամքը կը կատարեն և
կը ջանան ամէն կերպ զոհողութիւններու
դիմագրել: Ով որ Աւետարանի ոգին թա-
փանցած է, այդպիսին համար պարտա-
կանութիւնները ինքնին կուգան և սիրով
ու սրտով կը կատարուին:

Աւետարան բառը յատկանշական է հոս:
Յիսուս այդ բառով՝ կ'ուզէ իրերու տար-
բեր ուղղութիւն մը հաստատել: Այդ «բա-
րի լուր»ը ո՛չ թէ մովսիսական պատուէր-
ներէ պարզ ընտրութիւն մըն է, այլ սրտի
փոփոխումով և բարոյական զգացումներու
միջոցաւ այդ պատուէրներուն լրումը:
«Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վե-
րայ հնացեալ ձորձոյ, և ոչ արկանեն գինի
նոր ի տիկա հինս»⁽¹⁾. պէտք է հրաժարիլ
հին գործիքներէն և մաշած ձորձերէն, ու
ձեւը ինչպէս հիմը պէտք է փոխուի ան-
հրաժեշտօրէն: Այս կերպով էր որ Յիսուս
կրցաւ իր ժամանակի մոլորութիւններէն
առաջինին, այսինքն օրէնքի խիստ գոր-
ծադրութեան դէմ ոգորիլ:

Յիսուսի ժամանակակիցներուն երկրորդ
մոլորութիւնն էր ապագայ Մեսիայի մը
սպասումը: Ուրկէ կը յուսային կրօնական
և մանաւանդ քաղաքական մեծ յեղաշր-
ջում մը: Յիսուս իր պաշտօնին առաջին
օրերուն հանդիպեցաւ այդ գաղափարին,
բայց հակաստուածաշնչական (antiscritu-
raire) և անընդունելի նկատելով, պայ-
քարեցաւ անոր դէմ: Անիկա ինքզինքը
Մեսիա հռչակեց, և Հրեայի մը համար այդ
անձանօթ, օտար և գայթակղայից գաղա-
փարը խոնարհ Փրկիչի մը մէջ մարմնացուց,
որ իր եղբայրներուն համար անձը կը նուի-

րէ, և Աստուծոյ հնազանդելու համար կը
չարչարուի:

Անշուշտ մէկ օրուան մէջ չէր որ Յի-
սուս մեսիական սպքան հիանալի վարդա-
պետութեան մը բարձրացաւ: Անիկա իր
պաշտօնին սկիզբէն, ինչպէս հին հաւա-
տացեալները կը ներկայացնեն, գիտէր թէ
ինչ էր ի՞նքը և ի՞նչ բնելու համար եկած
աշխարհ: Իր ծրագիրը կանխապէս պատրաս-
տուած էր և դանդաղօրէն հետեւեցաւ
անոր: Անիկա առաջին օրէն գիտէր թէ
խաչուած պիտի մնենէր. բայց եթէ իր
վերջին տարիէն առաջ բնաւ ակնարկու-
թիւն չըրաւ խաչին, իր լուծութիւնը կա-
մաւոր էր և զիտումնաւոր:

Քաղեց

ՍՈՒՐԵՆ Վ. ԳԱԼԵՍԵԱՆ

(Edmond Stapferի
«La Palestine» գիրքէն.)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Գրեց՝ ԳՐԻԳՈՐ Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ

— 288 —

Կրօնքը՝ իր բոլոր ձեւերուն, իր վար-
դապետական զանազան դրութիւններուն
մէջ մարդկային պատմութեան գոյութենէն
ի վեր ամէնէն հզօր և գերազանցապէս
ազդող ներշնչումներու աղբիւրը եղած է
մտքի յղացումներու, արտայայտութիւն-
ներու և որ նոյնն է գեղարուեստի բոլոր
սեռերուն: Ճարտարապետին ամէնէն նուրբ
կառուցուածները, երաժշտական ամէնէն
խորունկ դաշնակութիւնները, նկարչային
ամէնէն կենդանի յղացումները և բանաս-
տեղծական ամէնէն խորունկ, վսեմ ու գե-
ղեցիկ ներշնչումներն ու սուսանումները
մեծ համեմատութիւնով մը կրօնքին դրոշմ
ու տիպը կրած են հզօրապէս: Եւ որչափ
աւելի Կրօնքին բանաստեղծութիւնը,
գեղարուեստը տիրական եղած է մարդ-
կային ներշնչումներուն, զգացումներուն
ու սիրալի մեծագործութիւններուն վրայ:
Փակագծի մէջ փութանք ըսել թէ՝ ուրա-
խալի պարագայ մըն է որ կրօնական գրա-

(1) Մատթ. Թ. 16 եւ 17:

կանութիւնը կարեւոր գետին մը գտած է եղիշէի, Նարեկացիի, Շնորհալիի և ուրիշ հոգեւունջ Հայրերու խնկաբոյր բանաստեղծութիւններու շնորհիւ մեր ցեղային պատմութեան մէջ : Էպէս կրօնական ազգ մը եղած ենք . և մեր ցեղին մշակած գրականութեան մէջ էն վսեմ տողերը և քերթուածները կրօնքէն ներշնչուած ու կրօնքին ի սպաս գրուած են : Նարեկը՝ հրաշակերտն է մեր բանաստեղծութեան հատակոտոր պատառիկներուն մէջ : Յաւալի է, սակայն, ըսել թէ բանաստեղծութեան այս սեռը իր նախնի վսեմութեան ու կարեւորութեան մէջ չի գտնուիր : Անձնական պատիկ փորձառութիւնս ալ կը հաստատէ, երբ հայ թիրթիրու շատերուն կրօնական քերթուածներ տպելու տրամադրութիւնը շօշափելով, գտած եմ թէ շատ խստապահանջ և տարամերժ գտնուած են, մինչդեռ գրք. կարաց կ'ընդունուին վրան-բաց, լկտի սրբապաղծութիւնները ոմանց, որոնք մրցումը կ'ընեն կարծես ամէնէն անհամեստ տողերը գրելու . և ասի պարզ շահագիտութիւնով մը թէ իրենք խնդրանքին համեմատ մատուցում կ'ընեն հասարակութեան, որով գրականութեան դերը կ'իջեցնեն մինչեւ չարշի առեւտուրին : Իրաւ է թէ հայ հատուածներուն մէջ Բողոքականներն ու Հռոմէականներն աւելի լայն բաժին մը տուած են կրօնական խորհրդանշաններ, որակայն, քիչ մը շատ վարդապետական ու քարոզաբանական ուղղութեան մը հետեւած են, և հասած չեն Նախնիքներու հոգեթուի խոյանքներուն : Այս պայմաններուն տակ հակակրօն ու դրական գրականութեան մը խնդրող միջնորդութիւն մէջ, յուսադրող ու կազդուրիչ է երբ կը հանդիպինք երբեմն կրօնաշունչ ներշնչումներով օծուած հատորներու :

Վերջին տարիներս, այդ սեռը ներկայացնողներուն մէջ յառաջապահի ու վարպետի դերը արժանաւորապէս տալու ենք «Հովուական Սրինգ»ի հեղինակին՝ Դուրեան Պատրիարքին : «Հովուական Սրինգ»ը չքնաղ, գլուխ-գործոց գոհար մըն է, և որուն տպաւորութեան, շունչին ու ձայնին ազդեցութեան տակ, ներշնչուած ու ձայ-

նակցած է «Սրբազան Ներշնչումներ»ու հեղինակը, զոր ինքն ալ կը խոստովանի իբր առիթը նոյն իսկ անոր ձօնագրելու :

«Սրբազան Ներշնչումներ»ու սիրուն հատորիկը իր գեղեցիկ ու հրապուրիչ կազմովն ու տպագրութիւնովը, Դուրեան սրբազանին թաղծալից ու գողտրիկ յառաջաբան-նամակովը կը բացուի :

17 տօնական օրերու շուրջ հիւսուած 35 գեղեցիկ ոտանաւորներ՝ տօնի ամէն մէկ խորհուրդը կը ճոխացնեն զգայուն թրթռուումներով ու հոգեպարար դրուագներով : Ոտանաւոր-տաղաչափուած տօնացոյց մըն է, որբացեալ Գիտակի «Տօնական Օրերու Մտածումներ»ուն պէս, որ ոչ թէ տօնի օրերը կը թուանշէ, այլ ամէն մէկ տօնին յարմար մտածումներովն ու զգացումներովը հոգիիդ ու սրտիդ նոր ներշնչումներ կուտայ :

Ոտանաւորներ կան զոր կարդացած ատենդ կ'զգաս թէ շարականներու մէջ կ'ապրիս :

«Այսօր Տէրը սփածաւ խոնարհութեան այն դեցակ, փոխան փառաց լոյսերու որ իր գահը զարդարեմ... Հրեշտակներէ պաշտօնող ծառայի առած վիճակ, Մեղաց աղօր կը լուայ իրեններուն ոտներէ...» :

Ուրիշ մը .

Խորհուրդը մեծ ահա այսօր

Կը յայնձուի անթափուհ...» :

Երկար պիտի ըլլար չարքը ներկայացնել այն գեղեցիկ կտորներուն . բաւական է այսչափն ալ, յանձնարարելու համար որ ամէն գրասէր և կրօնասէր քրիստոնեայ անձամբ վայելէ իրական տօնահանդէսի մը ըմբոյններուն . ես միայն կը փորձուիմ անոնց մէջէն ստորագծել ամէնէն սիրուններն ու յաջողածները՝ իմաստի, ոճի, արուեստի ու ներշնչումի տեսակէտէն :

Անցողակի ըսենք ի պատիւ հեղինակին թէ ան զգալի յառաջդիմութիւն և տաղանդ ցոյց տուած է, նախորդ հրատարակութեան «Գեթսեմանի»ի հետ բաղդատելով ներկայ գործը . ինչ որ մեզի հաւաստիք կ'ընծայէ թէ ապագային աւելի խորունկ, կուռ և չքնաղ քերթուածներու տակ պիտի ստորագրէ արդէն բեղմնաւոր գրչովը :

Հիմա աչքէ անցնելով կարդանք «Էմ-

մանուէլ»ը, «Թէ ո՞վ է Որդի Մարդոյ»ն, «Տեառննդառաջ»ը, «Անառակ»ը, «Ոտնալուա»ն, «Չէ տատ»ը, «Տէր իմ և Աստուած իմ»ը, «Համբարձում»ը, «Տիրամայր»ը, որոնց մէջ իրաւամբ կը հանդիպինք սիրուն տողերու, բանաստեղծական գողտրիկ ձեւերու և ոճի բնական դաշնակութեան: Հոն երբեմն պարզ պատմութեամբի մը բնական նկարագրութեանը կը հանդիպին. կարծես արձակ մըն է որ կը կարդաս: 54 էջին վրայ «Հոգեգալուստ»ի նկարագրելու պատկերոտ պատմութեամբը գեղեցիկ նմոյշ մըն է.

Սուրբ իկնեռն աշաղբիւր դարձած արցունքի, Կաղօթիկն, կը հսկի ին կրկնակի, Տիրամօր սիրտն աշ բաժանման կրակին, Տառապագին կը բռնկէր սպասիկն. Բայց գիտէիք, վստահելով խոստումին Անոր համար կը սպասէիք մեծ Յոյսին, Սփոփանքից. հրաշալի ծագումիկն:

Վերջացնելէ առաջ, իբր դիտողութիւն կը փափաքէի յանձնարարել բարեկամիս, որ աւելի կարճ ընելու ջանար իր ապագայ ոտանաւորներու տուները, որով աւելի աստորժով ու հաճոյքով կարդալու պիտի մղուէր գրասէր բնակրցողը: Հին ձեւ մըն է որ ճապաղ ընելու կը ծառայէ և կը ձանձրացնէ միտքը. ինչքան ալ տաղանդաւոր գրչի մը յաջողած կտորը ըլլայ:

Ա.Կ.Ի.Ի.Ն.Է.

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Վարդավառի շողշողուն, պայծառափայլ օրունան տառիւ.— գերազանցօրէն աւետաւանական եւ ազգային տօն մը միեւնոյն ատեն, — ոչինչ այնքան այժմէական կը դառնայ, որքան հոյակապ մէկ էջը մեր սիրելի քանոնաւոր-բանաստեղծ Պարոյանի, Ամին. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԴՈՒՐԵԱՆԻ, որուն հմուտ գրչին տակ հեղինակօրէն կը պարզուի հայ նախաքրիստոնէական կեանքի անուշ մէկ դրուագը, Թրժուուն, սրտայոյզ զգացումներով օծուն ու զիզուն: Նոյնքան այժմէական ու շահեկան է անոր աշակերտին Գր. Տ. Բաբգէն Ծ. Վ. ի հմտալից ուսումնասիրութիւնը՝ լեռներու եւ մասնաւորապէս Թաքորի եւ Հերմոնի վրայ.—

ՆԱԽԱՍԱՐԴԻ ԱՌԱՒՕՏԸ

Նաւասարդի «աշխարհախումբ տօնի» օրերուն՝ Հայոց բնիկ պաշտելութեան առարկայ եղող հին աստուածութիւններն՝ մէկ կեդրոնի մէջ՝ կ'ընդունէին հաւատացեալներու մեծահանդէս երկրպագութիւնն ու խրախուժքը:

Չենք կրնար իրենց ճիշդ թիւովը նշանակել այն դիքերն՝ որոնց Պանիէոնը կը գտնուէր Բագաւանի մէջ (ի Բագաւանի) . հաւանաբար սովայն, հանրային պաշտելութեան իրաւունքը կը վայելէին այն ամէն աստուածներն մանաւանդ՝ որոնց բազմին ներքին կամ կուռքերն զոնազան գաւառներու մէջ արդէն հաստատուած՝ ժողովրդային հանգամանք մ'առած էին:

Պէտք է ընդունել թէ «ի սկզբուն ամի նորոյ» (կամ Ամանորայ)՝ Բագաւանի մէջ հռչակուած տարեկան տօնը մէկ օրով չէր կրնար վերջանալ: Հին Տօմարի Աւելիաց օրերն (5-6) որ կը կանխէին Նաւասարդի առաջին օրը (քստ քաղաքականին՝ Օգոստոս ամիս) «աշխարհախումբ տօնին» նուիրուած էին. առ նուազն ամբողջ շաբաթ մը կը տեւէին այդ հանդիսաւոր խմբումներն (եթէ մանաւանդ Սակեան տօներու կամ Բարեկենդանական օրերու նմանութիւնն տեսնենք անոնց մէջ) և թերեւ տօնի վերջի օրն՝ որ Նաւասարդ ամսուն առաջին օրն էր՝ ամենէն մեծ և ամենէն գեղեցիկ օրը համարուեցաւ: Նախորդ օրերուն մէջ Ունգդակիան կրակին և քանի մը կուռքերու պաշտօնը կատարելէ յետոյ՝ Ամանորի մուտքը կը տօնէին Հայերն Արամազդի և Աստղիկի յատկացուած ընծայութիւններով: Այս զոյգն՝ ինչպէս Պաղատի կամ Պաշտի մէջ, նոյնպէս և Բագաւանի մէջ իրարմէ անբաժան կը տօնուէին: «Տուն Արամազդայ և Աստղկան».— Տարւոյն ըսկըզնաւորութեան տօնն աշխարհի ստեղծման կամ արարչագործութեան յիշատակին հետ զոյգ կ'ընթանար. Զրադաշտի կրօնքն ալ նոյնը կը սորվեցնէր:

Արամազդէ՝ դիմ Ամանորայ (նոր տարւոյ)՝ էր նաեւ Աստուած արարչութեան՝ իբրեւ

արարիչ երկրի և երկրի։ իրմով էր «լիութիւնն պարարտութեան» կամ պտղաբերութիւնը երկրին, և այդ տօնական օրերուն՝ հեռուոր կողմերէ կուգային շատեր իբրեւ պանդուխտներ, կը կերակրուէին անոր սեղանի զոհերէն և կը հանգչէին մեհեանին մէջն ու շուրջը երեկօթիկու համար, որով և վանասուր կամ հիւրընկալ անունն ալ տրուեցաւ իրեն։ Ամառորաբեր տօնին խառնուած էր նաեւ սեմական կամ քաղդէական աւանդութիւն մը, Ջրհեղեղի յիշատակը։ Ասոր յայտնի նշանն է ջուր սրակելու սթափեցուցիչ սովորութիւնը՝ որ դեռ պահուած է Հայ. Եկեղեցւոյ մէջ՝ իբրեւ արարողութեան մաս մը՝ Ալլակերպութեան տօնին օրը։

Գաղով Աստղիկին՝ Ալլաւնիով ու վարդով կը մատնուի արդէն տափանքի և գեղեցկութեան Դիցունին։ Ինքն՝ աւանդութեան մը համեմատ՝ Ջրհեղեղէն աղստ մնացող արդարին ալջիկն էր, և ամբարտաւան հականերու կոխին մէջ ալ հաշտարարի մարդասիրական դերը կատարեց յետոյ։

Աստղիկի յատկացուած Նուասարդի տօնական կացութիւններէն մին Վարդապետ կոչումն ունէր. գեղեցիկ բացասութիւն զուարթ ծաղկահանդէսին, որ Նուասարդի վարդապետն Արշալոյսէն կ'ողջունուէր։ Ծիրանի առաւօտուն շողերովն հրճուող այդ ժողովուրդը անուշակ աղբումներ կ'ներշնչէ մեզի, թէեւ չունենանք իր թանձր հաւատալիքը և թանձրագոյն սա սկզբունքը. «Մի անցցէ առ միօք ծաղիկ գարնայնոյ. բոլորիւք վարդից պսակեցուք մինչեւ թառամիալ լցին»։

Առաւօտ Նուասարդի. — Ծիրաններու ծուխը, ապրող ու կենսալիւր ապրող յարկերու աշխարհ կենդանութիւնը կ'խորհրդաւորէր. որսի պառականներն վարդով եղնիկներու՝ վազող եղջերուներու երամներն կ'հալածէին. հիւսկուգային աղանձներու թեւակուռ զոյգերն. զով ջուրերու ցրնցողները ցողակով կ'թափթրփէին մազերու և ուտերու վրայէն։ Վանասուր-Արամազդին երկրպագող ամբողջ զոհի ճենձներուն շուրջը ճանձերու պէս կ'ըզզար. գլխի

կարմիր կայլակներ աչքերու բոցերն կ'ծիրաններփէին, թմբուկներու դափներ երգի ձայներն ու սրսի բաթախումներն կ'ողբւորէր։ Երջանիկ առաւօտ Նուասարդի՝ զոր օրհասականին աչերն անդամ ա՛յնքան բաղձանքով կ'փնտռէին։

Կեսնքի այդ խնձղուն ճարճատումներուն առջեւ՝ պահ մը հին մարդը կ'մրմռայ մեր ներսը՝ թէ ի՞նչու այս ամէն արփական ցոլքերն ու արբեցուցիչ գեղուններն թաքորի բարձրերէն արձակուած մէկ ճառագայթով սուղուեցան ու ալլակերպ եղաւ կեանքը, թէեւ դարաւանդին ստորտը գալարող ու սողացող մահուան ստուերներն միշտ նոյն մնացին։ (*)

Բայց, Նուասարդի առաւօտը հիմա ուրիշ հրապոյրներ ունի. իբրեւ քրիստոնեաներ՝ պէտք է չունենանք աշխարհի հեշտամուղ զգլխանքն։ Անո՛ր յիշատակովն «որուն հոգին չմնաց դժոխքի մէջ», ուրիշ լոյսեր թող ողողեն մեր հոգին, ուրիշ վարդեր թող ծաղկին մեր շուրջը։ Այսուհետեւ հոգեւոր ուրախութեան «Տիւն է որ կ'լուսաւորէ զմեզ», և երկնային գեղեցկութեան «Արուսեակն է որ կ'ծագի մեր սիրտերուն մէջ» (Բ. Պետր. Ա. 19)։

Ե. Վ. Դ.

Լ Ե Ռ Ն Ե Ր

ԹԱՐՈՐ ԵՒ ՇԵՐՄՈՆ

Լեռներ՝ հողագունտի ուշագրաւ կէտերն են եւ ատոնց նշանակութիւնը մարդկային կեանքի պատմութեան մէջ ա՛յնքան մեծ է եւ այնքան ընդարձակ՝ որչափ իրական։

(*) Հեղինակը, այն ասեւն նշիշէ Վ. Դուրեան, ծանօթութեամբ մը կը գրէ թէ «սեղոյ անձկութեան պատճառով յօդուածին ինչ ինչ մասերը թողուած են»։ Տեղւոյ անձկութիւնը պէտք է իմանայ նոյն թուականի (1896, Պանֆայի դէպքի ահաւոր օտիւն) քոնակալական շրջանի անհետհուրժեղի գրախնդրութիւնը։

Ծ. ԽՄԲ.

Բարք, սովորոյթ, քաղաքակրթութիւն, ամենուն մէջ ալ՝ լեռներ դեր ունին:

Եւ կրօններու տեսակէտով, լեռներ ու բլուրներ ամեն ինչ են: Աստուածներ, «Բաջ»եր կ'ընակին ատոնց վրայ, պատգամներ կ'արձակեն անկից, քանաստեղծներու մուսաներն ալ բարձունքներէ կը ներշնչեն: Ինչ հսկայ հաւատալիք, հսկայ բարձունքներու վրայ: Իրօտունք ունին տնոնք, որ բաւականութեամբ անոնց կը համարին լեռները, եւ հարթ, անծիր անապատը՝ միաստուածութեան:

«Իսրայէլ»ի կրօնական ամբողջ դրութիւնը բարձունքներու վրայ պատրաստուեցաւ: Ս. Գրոց լեռները տարբեր զանգուածներ են կարծես: Լեռներ՝ մարգարէներու ամէնէն հզօր փոխաբերութիւնները կը ցոլացնեն: Ենթադրուի որ ցատումը, սէրն ու սպառնալիքը լեռներով կ'չափուին:

Պաղեստինի լեռները քաղցրութիւն կ'ըլլեն (Ամովս. Թ. 13, Յովել Գ. 19), արօրադիր են ամենքն ալ (Ես. Է. 24), կաթով կ'ոռողուն անոնք (Յոբ. Իթ. 6), խնկարեւ են ամենքն ալ (Երգ Երգոց, Բ. 17): Աստուած՝ բարձունքներէն կ'լսէ Դաւիթը (Սաղ. Գ. 5) եւ սուրբեր միայն կրնան բնակիլ ատոնց վրայ (անդ ԻԳ.):

Պաղեստինի լեռները պարարտ են, մածուկ են եւ հպարտ (անդ ԿԷ.), յաւիտենական են ատոնք (անդ ՀԵ.): Լեռներ՝ խոյրերու պէս կը ցնծան հոն եւ բլուրներ կ'կայտուն գառնուկներու նման (անդ, ՃԺԳ. 4—6, Եսայ. ԾԵ. 12):

«Անէճքի» եւ «օրհնութեան» լեռներ կան հոն (Բ. օր. ԺԱ. 29, ԻԷ 12—26, ԻԸ): Անոնք կ'միսան՝ եւ Աստուած կ'յայտնուի, կ'ըրբոքին՝ եւ Աստուած կ'խօսի:

Պաղեստինի լեռները՝ մխիթարութիւնն են (Եսայի Ժ. 32). խաղաղութեան քաղաքին բազմերը գեղեցիկ են լեռներու վրայ եւ արագ (անդ ԾԲ. 7, Նաւում Ա. 15):

Լեռները խօսուն են Հին Ուխտի մէջ. կը ծխան, կը փայլատակեն, կը սասանին, կ'որոտան: Բրիստոսով անոնք ալ փոխուեցան: Վերացումներու բարձունքներ եւ զան ատոնք. լոյն են ալ եւ խաղաղու-

թեան անարատ միջնորդ մը կը պատէ զանոնք. հոգին իւր լայնութիւնը ատոնց վրայ կը գտնէ: Գրիստոս՝ իւր աստուածային մեծութիւնը լեռներու վրայ ցուցաւ, եւ իւր ամենէն վսեմ Բարոգը խօսեցաւ լեռան վրայ:

Այլակերպութիւնը՝ լեռներու ալ այլակերպութիւնն է:

ԹԱԲՈՐ կամ ԹԱԲՈՒՐ՝ Գալիլայի ծովակին տրեւտեան հարաւային կողմը եւ Յեզրայելի գաւառին հիւսիս-արեւելեան ծայրը՝ կը բարձրանայ ատանձինն, բրգաձեւ՝ հսկայ պատուանդանի մը պէս: Բարձրկեկ պարանոց մը միայն կը զատէ զանի Նազարէթի ուրիշ լեռներէն: Գագաթը մէկ մղոն չըլլապատով տափակ ձուածն մըն է, որուն կէտը՝ դէպ ի հարաւ՝ ծածկուած է աւերակներով: Թաբոր բարձրութիւնը ծովու (Միջերկրական) մակերեւոյթէն 1843 ոտք է, եւ երկրաբանական կազմութիւնը՝ կաւաքար:

Թաբոր (այժմ Ճէպէլ Էթթոր) կը նշանակէ «բարձր, զահաւանդ», ա՛յս բառական թարգմանութեամբ գործածուած է Ովսէի Ե. գլխում:

Հին եւ նոր ճանապարհորդներ հաւասարապէս կախարդուած են Թաբորի գեղեցկութեան հանդէպ: Սկիզբէն ի վեր բոլոր այցելուներ, հաշակաւոր գիտնականներ՝ կարծես կը մրցին իրարու հետ, տիրապէս բնական նկարագրութեամբ մը պատկերացնելու անոր շնորհալի ցոլածքն ու ընդգրկած համայնապատկերը:

Մեր խումբ մը ուսումնասէր վարդապետներն ալ դարեր յառաջ բարձրացան հոն եւ աւելի չքել ու աւելի ճոխ տեսարան մը վայելեցին անուշտ, քան Րոպինսըն, Ռիչարտսըն, Ռինան, հայր Տիտոն, որոնք գիտնականի սքանչելի նկարագրութիւններ, տեղեկութիւններ տրտադրած են Պաղեստինի, մասնաւորապէս Գալիլայի ա՛յս կէտերուն վերաբերմամբ:

Այդ վարդապետներէն մին՝ Եղիշէն, «տառապեալ մը քան զամենայն մարդ», որ հետիոտն ճետեւած է «ընդ տէրունեան շաւիղն ի լեռան անդ», սապէս կը նկարագրէ:

«Թարորը վայելուչ կ'երեւի քան շատ մը լեռներու տեսքը. անոր նիստը կ'իյնայ Գալիլիայի մեծ դաշտի մը մէջ⁽¹⁾»։ անոր մօտ ուրիշ լեռ մը չկայ, «և ինքն է բարձր և բոլորամիտ»։ շուրջը ինքնաբերական ջուրերու գուեր կան և խիտ առ խիտ ծառատունկեր, «որք պտղաբերին յանձրեւաբուլիս ամպոյ»։ կա՛ն տեսակ տեսակ քաղցրահամ միրգեր և ուրիշ շատ մը «համադամք անուշուրթեան, որթք գինեգերք, որ իբրեւ թագաւորաց ըմպել արժանիք»։ անսպառ ձիթենիներ և եղջիւրենիներ (ca-roubier) կը գրաւեն «զդէմն լերին»։ Թէեւ չորս կողմէն ալ հով կը վիչէ հոն, այլ «յուլովագոյն հիւսիսի զօրանայ ի նա»։ Եւ ա՛յն շաւիղը, ուսկից ելած է Տէրը՝ «յոյժ ողորդ է ելն» և «այսր և անոր մօտեւածով» շինուած. ո՛վ որ կ'ուզէ աղօթելու համար հո՛ն ելլել «դիւրաւ զեւն ի վեր առնիցէ»։ Երբ լերան բուն գագաթը կ'լինի, բոլոր դաշտը՝ առհասարակ աչքի առջև կը պարզուի արեւելքէն մինչև Յորդանան, արեւմուտքէն մինչև Մեծ ծովը (Միջերկրական), Ծայթան (Սիւրոն)։ հիւսիսէն մինչև Տիգրիական ծովը, հարաւէն մինչև Եզրայիլացի Նաբովթի այգին⁽²⁾։ Եւ այն բոլոր վայրերում դիւզ գիւղի և ագարակ ագարակի մօտ շարուած են. բազմաթիւ քաղաքներ սփռուած են։ Լեռան կատարը հովտաձեւ գոգացած է, ուր «գոն և ծառք սակաւագոյնք և թանձրահող բազում»։ Եւ ա՛յն տեղն, ուր Տէրն իւր լուսաւոր պայծառութեամբը երեւցաւ իւր աշակերտներուն, հովտին արեւելեան կողմը՝ Պետրոսի խօսքերէն յետոյ՝ երեք եկեղեցիներ շինուած են իրարմէ հեռու և բազում պաշտօնեաներ ունին...

Երեք եկեղեցիներէն մին՝ միւս երկու-

քէն աւելի մեծ է, «զոր և Տէրունեան իսկ անուանեն»։ միւս երկուքին մէջ դրուած են առաքելոց մասունքը, որք նոյն օրը (Այլակերպութեան) հիմնարկեցին «զտեղին» երեք տաղաւարներուն անուններովը, անոնք սուրբ վկայարան կ'անուանուին և նուիրուած են Մովսէսի և Եղիայի անունն։ Բոլոր աղօթքները Տէրունականին մէջ կը կատարեն, «իսկ յերկունս հւս կ'երթան և անդ զ'Աստուած փառաւորեն⁽³⁾»։

Այդ եկեղեցիները, զոր Հեղինէ Դշխոյն շինել տուած է շուրջ 327ին, իրենց աւերակները կը ցուցնեն այժմ՝ խառն հին հրէական, հռովմէական և արաբական ամբողջներու աւերակներուն հետ։

* *

Աւետարաններ յսկանէ անուանէ չեն նշանակեր այլակերպութեան լեռը, և Պետրոս որ թմրած էր ա՛յդ սքանչելի պայծառութեան մէջ, «սուրբ լեռ» յիշատակութեամբ կը բաւականանայ (Բ. Պետ. Ա. 18)։ բայց «աւանդութիւնը» սերտիւ կապուած է Թաքորին հետ. այնպէս որ ուխտաւորներ, ամէն ազգէ, ինչպէս նաև «ուխտաւոր մանկունք Հայոց», այդ «ցանկալի» լեռան վրայ թափեցին իրենց բարեպաշտութեան տենչանքը, և անոր կատարին վրայ երեւակայեցին ա՛յն լուսեղէն հեղեղները, որք ողորկեցին Բրիտանոսը և ապշեցուցին երեքները՝ լոյս շղթաներով միացնելով Սինայի բոցակիզումին հետ խօսող Մարգարէին և Բորիքի վրայ Աստուծոյ անցքը տեսնող Թեղբայրին համակ հօւր տեսիլ-յիշատակները։

(¹) Այս հաստատութիւնը յառաջ քերիմ Եղիշէ պատմագրի վերագրուած ճշտեմ, որ «Ի Թաքոր շերիմ Յայնուքիւն Տեսուն առ Պետրոսեանց» խորագրով եւ «Միջդեռ երթային» սկսածով հրատարակուած է ի Վենետիկ 1850ին, «Մերոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մասնագրութիւնի» հատորին մէջ (էջ 213—239)։ Կը փութանք դիտել այդ քի՛ վարդապետին Եղիշէի անունով կարդացուած «Յիշեալ եւ Տէր Աստուած» աղօթքը չկրնար եղիշէին տրուի։ Այդ սկսածով եւ շեշտով աղօթքներ Բարսեղի գրչեմ ելած կը համարուին. եւ իրաւի 1714ին սկսած ձաշոցում, (էջ պիւր — 848) սապէս խորագրուած է այն. «Աղօթք Մերոյն Բարսեղի՝ արարեալ վասն Այլակերպութեան Բրիտանոսի»

(¹) Յե. Բայելի դաշտն է կամ հովիտը. ծանօթ նաև Եսթեղիս անունով։ Միջերկրականի մակերևոյթէն գրեթէ 400 ոսք բարձր. մէջէն կ'անցնի հեղեղաձև Կիսանի։

(²) Չոր Ախաբ թռնի գրաւեց՝ իւր կնոջ խորհրդով՝ խեղճ Նաբովթը սպաննելու աշխատեց, եւ պաշտօն մը չիմեց հոն. իսկ վրէժխնդիր Թեղբայրին սարսեց անխաւաք յանուն Աստուծոյ (Գ. Թագ. ԻԱ. — Հմմտ. Դ. Թագ. Ժ.)։

Երբ ա՛յսպէս մէկ կողմէն «Աւանդութիւնը» մեզ կը տանի Թարորի վրայ՝ մըտածելու ինչ որ տեսան Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս, և ուր յետոյ Պետրոսի փափագած տաղաւարներուն տեղ եկեղեցիներ կառուցանել կուտայ Հեղինէին, միւս կողմէն աւելորդ չէ դիտել տալ թէ երկեւղած գիտնականներ Թարորի գագաթը շատ յարմար չեն գտնելու այդ աստուածային երևուածին:

Թարորը միշտ ամրոց մը ելած է: Քրիստոսի Այլակերպութեան ատեն, որ տեղի ունեցաւ 29ի Յուլիս-Օգոստոսին, Հռովմայեցիք կը սիրէին հոն: Իսկ Տէր Յիսուս այս միջոցին կը գտնուէր Գալիլիայէն դուրս «Ի չէսս Կեսարիայ Փիլիպպայ» (Մտթ. Ժ. 13-16, Մրկ. Ը. 27-29), քաղաք մը՝ հաստատուած Հերմոնի հարաւային ծայրը: Քրիստոսի Գալիլիա վերադարձը յայտնապէս յիշատակուած է նոյն Աւետարանիչներէն, Այլակերպութենէն յետոյ: Ուստի և կա՛ն ոմանք որ կը կարծեն թէ Քրիստոս իր պատուածային փառաւորումը Հերմոնի վրայ ճառագայթած ըլլայ:— Հերմոն՝ Անտի-Լիբանանի կեդրոնական, հարաւային բարձրակէտն է՝ ծովէն 9376 ոտք բարձր: Ձմեռն ձիւնապարդ գագաթով, տմտն գծաւոր: Հերմոն (=բարձր, գագաթ) այժմ «Ճէպէլ էլ Շէյխ» (=գլխաւոր լեռը) հոյակապ նիստ մը ունի և հրապուրիչ տեսք մը: Օդը՝ որ հոն կը ծաւալի՝ վճիտ է և զով: Յիսուս՝ որ կը սիրէր բացօթեայ ազօթել այսպիսի բարձունքներուն վրայ, կը կարծուի թէ ընտրեց Հերմոնի բլուրներէն մին, վերացաւ հոն իւր երեքներով: «Վերացաւ աղօթելու համար» (Լուկ. Թ. 28), և աղօթքի միմունջներուն՝ հոգիի այն խաղաղ ընդարձակութեան մէջ «այլակերպ եղաւ»: Թափորը՝ յարմար վայր մը չէ՛ր գուցէ վայելելու ա՛յն միմունքները, զոր կը սիրէր Յիսուս:

Ձենք կարծեր որ «Աւանդութեան» վրայ կրթնած դարաւոր բարեպաշտութիւնը վրդովի, երբ Աստուածորդուն փառքը Հերմոնէն փայլատակէ՝ նոյն ինկ Աւետարաններու պատմութեան աւելի յարմար գալով:

—Թարորի պէս Հերմոնն ալ Դաւթի Աստուծոյն անունով կը ցնծայ (Սաղմ. 2Ը. 13):

ԱՍԲԳԷՆ Վ.

ՍԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ

(Շար. նախորդ թիւին)

Է

Խաչէն հոռ անան հովերն երբ սկսեցին փչել ու սեպտեմբերի անձրեւները տեղալ, Պետրոս ածապարեց իջնել գիւղէն: Բնութեան թախիծը կը սաստկացնէր իր տրտմութիւնը. չէր կարող այլ եւս երկար ատեն մնալ Պոյաճը-գեղ որ օր ըստ օրէ ատելի կը դառնար իրեն:

Նոյնմբերի վերջերը Ստեփանիկ և Երանիկ ամուսնացան Ենի-Գարու: Երկու եղբայրները շարունակեցին միասին բնակիլ:

Ը

Պետրոս շատ կերպարանափոխ եղած էր, հետզհետէ կը նիհարնար. տան մէջ զրեթէ առանձնացեալ կեանք կը վարէր: Մայրը սրտադողի մէջ հարցուց քանի մը զրացիներու թէ ի՞նչ ընէ: Կեղինճիօ ունի ըսին. համոզուեցաւ. ստիպեց տղան երթալ Վէլիր-խան կեղինճիօին ցոյց տալ ինքզինքը. Պետրոս մտիկ չբրաւ. Շագիկ ինք դնաց. նկարագրեց տղուն սուղջական վիճակը. պատմածները կեղինճիօին նըշաններ էին. կեղինճիօին չիւ մը կարմիր ջուր տուաւ: Մօրը սիրտը չկոտրելու համար Պետրոս քանի մը օր խմեց այդ ջուրէն, ակամայ խնդալով. մայրը ուրախացաւ, սիրտ առաւ: Բայց Պետրոս վերըստին շարունակեց իր թախճագին վիճակը:

—Աս ի՞նչ խատենմիզ ոտք, քա աս ի՞նչ ուղղութեամբ հարս, կը մրմնար Շագիկ տուտու որ միշտ զայրացած կը մնար հարսին դէմ, համոզուած ըլլալով որ Երանիկ գլխէ հանած էր Ստեփանիկը:

—Վո՛ւյ, ոտքս կոտրէր տէ բարով խերով չերթայինք տղ նալէդ տեղը. չար խերնիս դարձաւ:

Ոչ ոք կը հասկնար Պետրոսի ցաւը. միայն Տէր Վարդանի մտքին մէջ կասկածներ ծագած էին: Քահանան յիշելով Պոյաճը գեղի պարտէզին մէջ Պետրոսի հետ ունեցած կիրակի առաւօտեան տեսակցութիւնը,

իրեն եղած հարցումներն, և անմիջապէս յետոյ եղած փոփոխութիւնը, սկսաւ ենթադրել թէ Պետրոս Սուրբիկն առնել փափագելով հանդերձ, զոհած էր ինքզինք եղբորը համար։ Միայն մութ կէտ մը կար ինչ դարձած էր առաւօտէն մինչեւ երեկոյ, որպէս զի Պետրոս հարկադրուի առտուն ուրիշ կերպ խօսիլ, իրիկունը ուրիշ։ Կասկածները փարտատելու կամ թէ հաստատելու համար ուղեց անգամ մը երթալ Պէշիկթաշ, տեսնել Սուրբիկը. անոր դէմքէն, խօսքերէն աւելի բան մը հասկնալ կը յուսար։ Յիշեց թէ Երանիկի կարգուելէն ի վեր Սուրբիկ բնաւ չէր եկած գիշեր մը քրոջն հիւր ըլլալ։

Երկուշաբթի օր մը Տէր Վարդան Պէշիկթաշ դնաց. Ֆուլիկ հանրմի վրայ լոյս իջաւ տէրտէրը տեսնելով. Սուրբիկ քմիծաղ մը դնեցաւ։ Որքան փոխուած էր այդ տուղդ աղջիկը, տխուր, նիհար, դաւկահար։ Տէր Վարդան համոզուեցաւ թէ Սուրբիկ ու Պետրոս զիրար սիրած էին ու կը սիրէին, բայց ամուսնանալու անկարելիութիւնը զիրենք յուսահատութեան դատապարտած էր։

Երբ Սուրբիկ սուրճ եփելու համար դուրս ելաւ, տէրտէրը ըսաւ.

—Օրիորդ Սուրբիկը քիչ մը նիհարցած կը տեսնեմ, Պոյաճը-գեղի պէս չէ, ինչ ունի։

—Ախ, տէր հայր, հիշ մի՛ հարցներ, քանի եկեր ենք կերածս կռնակէս կ'երթայ. ինչ ըսեմ, իմ մեղքս է. բարով խերով չերթայինք այդ տեղը. մեր մի՛նձերը հախ ունէին յի սրբան չէին աւրեր. պղտիկ քուրը կարգուի աէ ինք ասանկ մնայ, նախը ճահիրս չը հալի չը մաշի։ Ախ, Տէր Հայր, աճապա խըսմէթ մը չը՝ պիտի բացուի։

—Ինչո՞ւ չէ. Աստուած ողորմած է. դեռ ժամանակը չէ անցած. մենք ալ կը նայինք. ձեռքերնուս եկածը կ'ընենք. հոգ մի՛ ընենք հանրմ։

—Աման, Տէր Հայր, դուն գիտես։

—Անհոգ եղիր։

Սուրբիկը անուշ բերաւ քիչ մը ետքն ալ սուրճը. ալ այս խնդրին վրայ խօսք

չբացին. բայց տէրտէրն ամէն ինչ հասկըցած էր։

Շաբթուան մէջ ցերեկ մը Մարտնկօզ-եսններուն տունը հանդիպելով, Տէր Վարդան խնդրեց որ Պետրոս էֆէնտին եթէ կանուխ տուն գայ քիչ մը իրեն հրամայէ։ Շուկայէ վերադարձին Պետրոս դնաց Տէրտէրին որ միշտակ նստած էր տաքուկ սենեակի մը մէջ։ Սովորական բարեւներէ վերջ քահանան հարցուց.

—Օղի մը կը խմն'ս եա։

Եւ առանց պատասխանին սպասելու ըսաւ որ օղի բերին։ Երեցկիւնը սրուակ մը օղի և աղէկ մի քանի տեսակ մեզի չըտկելով ներս զրկեց։ Սկսան խմել. սրուակին ուրիշ մըն ալ յաջորդեց. կը խօսէին ասդիէն անդիէն։

—Պետրոս էֆէնտի, միջոց մը ըսաւ տէրտէրը, անցած օր Պէշիկթաշ դացի ձերին ներուն. խեղճ Սուրբիկն որչա՛փ նիհարցեր է։

Պետրոս լուռ, բայց ալափոխուած մնաց. տէրտէրն անդթօրէն շարունակեց.

—Շատ կը վախնամ որ եթէ այսպէս շարունակէ խեղճը ձմեռը չհանէ։

Պետրոս լուռ էր միշտ, բայց յուզումի ակներեւ նշաններ կային դէմքին վրայ։

—Սրտի ցաւ ունենալու է, հրամանքդ բան մը չե՛ս գիտեր. այնչափ ատեն գեղը մէկտեղ էիք։

—Ե՛ս. ինչ կրնամ գիտնալ, Տէր Հայր, կմկմաց Պետրոս։

—Ծանրմ, քեզի բան մը պիտի հարցընեմ, բայց հետաքրքրութիւն մի՛ սեպեր. ես խոստովանահայրդ եմ. եկուր ինձի խոստովանանք մը եղիր. գիտես եա, դըպրոցէն ելլելէդ ի վեր փիլոսոփա տակը չես եկած։

—Ինչ խոստովանեմ, Տէր Հայր. մեղքերս շատ ըլլալու չեն. անասունի պէս կհանք կը վարեմ։

—Սրտի խոստովանանք մը չունի՛ս. ես քեզ զաւկիս պէս կը սիրեմ։

—Գիտեմ, Տէր Հայր, չնորհակալ եմ. մենք ալ հրամանքդ հօր տեղ դրած ենք։

—Անանկ է նէ, Աստուածդ սիրես, ինչ դարձաւ Պոյաճը-գեղ որ առտուն ինձի

ըսիր որ Սուրբիկին համար մայրդ համոզեմ ու իրիկունը միտքդ փոխեցիր, և յաջորդ օրն ալ եղբորդ համար խօսեցար: Ի՞նչ դարձաւ. չհասկցայ:

Պետրոս տխրապիւն ժպիտ մը ունեցաւ. երկար ատենէ ի վեր կը կարօտէր բարեկամի մը որուն բանայ սիրտը: Այդ սիրտն այժմ շատ լեցուած էր. գլուխը տաքցած օղիին ազդեցութեան ներքեւ, Սուրբիկի համար լսած լուրէն երկիւղալիւ, չը կրցաւ լռել:

—Տէր Հայր, եղածը տեսար, ըսաւ: Երկու եղբայր երկու քոյր չեն կրնար առնել, բախր: Ստեփանիկ Երանիկը կը սիրէր. ի՞նչ կրնայի ընել. մէկդի քաշուեցայ:

Եւ սկսաւ պատմել ինչ որ անցած էր:

Տէր Վարդան մօրուքը խառնելով մտիկ կ'ընէր ու կը խօրհէր: Երբ պատմութիւնը վերջացաւ, քանի մը վայրկեանի լռութենէ յետոյ տէրտէրը մտախոհ ըսաւ.

—Եթէ կարենամ Սրբազան Պատրիարքէն հրաման մը առնել, կ'ամուսնանամ Սուրբիկի հետ:

Պետրոս շուարած մնաց. չէր հաւատար լսածին. զէմքին վրայ յանկարծական փոփոխութիւնը կը խօսէր իրեն փոխան:

—Հասկցայ, հասկցայ, ըսաւ տէրտէրը.

—Եւ գաւաթիկները լեցուց. —Վաղը կամ միւս օր կ'երթամ Պատրիարք Սրբազանին, քիչ մը խիստ եկեղեցական է, բայց կը յուսամ թէ կը համոզուի. վերջապէս արիւն չկայ մէջերնիդ, խնամութիւն է: Եթէ ինծի այն տտեն ամէն բան ըսէիր, ինդիրն ուրիշ կերպ կ'ընէինք. միջոց կար՝ բայց եղածը եղած է: Եթէ Սրբազանը համոզուի՝ հրամանը կ'ընէ. Ժողովէն շուտ կ'ելլէ: Ատենապետին, ուրիշ մի քանի անդամներու նախապէս կը խօսիմ:

Մութը կոխած էր. Պետրոս մեկնեցաւ. արագ արագ քալելով գնաց տուն, սիրտը յուսալիր, այլ շուարած: Հաւատար՝ Ինչո՞ւ չէ: Սեղանին վրայ Շաղիկ տուտու, որուն աչքերը միշտ կը լրտնէին զաւկին երեսը, նշմարեց ուրախութեան արտայայտութիւններ. բան մը չըսաւ, բայց սաստկապէս յուզուեցաւ:

Տէր Վարդան նոյն գիշերը շատ մտա-

հոգ անցուց. արդեօք մեծ անխոհմտութիւն չէ՞ր ըրած յոյս արծարծելով Պետրոսի յուսահափ սրտին մէջ: Իր դիմումներու անյաջող ելքն ո՞չ ապաքէն կրնար ծանր հետեւանքներ առաջ բերել:

Միւս օրը գնաց Պատրիարքարան, ներկայացաւ Պատրիարքին. արտաշարժ նկարագիր մը ընելով Պետրոսի վիճակին, ազաչեց հրաման տալ գնա պակել քենիին հետ. խօսքը բերանը մնաց.

—Ի՞նչ կ'ըսես, գոչեց բարկացայտ Պատրիարքը. իմ օրո՞վս մտքերնիդ դրած էք Եկեղեցիին օրէնքներն ոտնակոխ ընել. սըւո՞ր նայեցէք մէյ մը. աղջկան խրթոյխին եկեր է քի քենին պիտի առնէ. ասո հեռիքը կարգուիլ կ'ուզէ նէ աղջիկ կը պակսի: Բենին առնէ պիտի, ըրած խալթը նայէ:

—Բայց... Սրբազան:

—Լռէ՛, ճերմակ մօրուքէդ ալ չամչնալով եւր եկեր ատանկ խօսքեր բերանդ կ'առնես:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Փ Ա Կ Ո Ւ Մ

ԲԱՐԵՂԻ ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆԻՆ

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԲԱՐԵՂԻ

Արժ. Տ. խմբագրապետ ՏԱՃԱՐԻ

Դպրոցական տարեշրջանը աւարտեցաւ. ուսուցիչները մեկնեցան բացի մէկ տեղացիէն. թաղական խորհուրդը հրաժարեցաւ. Բաղ. Ժողով չունիւ. Գաւառ. Ընդհ. Ժողովին ընտրական տեղեկագիրս կ'երեւի թէ Պատրիարքարանի զիւաններուն մէջ կորսուած է, որուն համար վեց ամսէ ի վեր չի վաւերացաւ ան որ գումարէի Ժողովը:

Նկատելով որ Առաջնորդարանի մէջ մինակ եմ. նկատելով որ քովս մարդ մարդաւանք չի մնաց. նկատելով որ յառաջացեալ տարիքիս մէջ օգտակար պիտի չի

կրնամ ըլլալ այս կացութեան հանդէպ . ես ալ Առաջնորդարանը փակեցի այս օրէն :

Սակայն խղճի վերջին պարտականութիւնս կատարած ըլլալու համար ներկայ վիճակը Տաճարի միջոցաւ կը պարզեմ հանրութեան առջեւ . քանի որ Պատրիարքարանը մուկ կը մնայ բազում թախանձանացս հանդէպ :

(ԿՆԻՔ) Առաջն. | Փոխանորդ
11. Յիւ. 910 ՄԻՔԱՅԷԼ ՔԶՆՅ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Հրատարակելով Բաբերդի առաջն. Փոխանորդ քննչ. եղբօր սոյն նամակը, մեր նպատակն է Ազգ. Վարչութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել կարգ մը գաւառներու խղճալի վիճակին վրայ, որոնց կարեւորներէն մէկն է Բաբերդ : Եթէ կան գաւառներ, ուր ժողովուրդը կը նեղուի հողային խնդրոյն չկարգադրուելէն, դրացի անհամադարտ տարրերու պատճառած նեղութիւններէն են . կան ուրիշ շատ թեմեր ուր ժողովուրդը կը նեղուի, կը տագնապի՝ պարզապէս ազգային կեդրոնական իշխանութենէն անհետուած, մոռցուած ըլլալուն :

Ծաւալի է որ գաւառական Ընդհ. Ժաղովի մը բնութեան վաւերացումը կը յապաղի ամիսներէ ի վեր, ո՛վ գիտէ ո՛ր Դիւանին անհազութեան հետեւանօք կորսուելով բնորական տեղեկագիրը, ինչ որ վերջին կաթիլը կ'ըլլայ համբերութեան բաժակը լեցնելու, և ձերունազարդ քահանայ մը կը հարկադրուի փակել առաջնորդարանը, պատասխանատու չմնալու համար հանրութեան և իր խղճին առջեւ :

Կորովի չարժուած մը անհրաժեշտ է, վերակազմութիւն մը, ու քիչ մը եռանդ, ոգեւորութիւն, նաեւ կանոնական ճշտապահ գործունէութիւն մտցնելու համար Ազգ. Պատրիարքարանի մէջ :

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Անցեալ չարթու Տաճարը մամուլ յանձնուած էր արգէն, երբ թերթերը գուժեցին մահը — Ազգ. հիւանդանոցին մէջ — անվեներ, արիասիրտ եկեղեցականի մը, Սսոյ վանքին կաթող. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Թուրսարգիսեանի : Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին թափուր և տմէ-

նէն տագնապալի տանտմեայ շրջանին մէջ, հանգուցեալ վարդապետը զօրաւոր օժանդակ մը եղած է տեղապահին՝ պահպանելու համար ազգին և աթոռին իրաւունքները, և մերժելու ժամանակին բռնապետական կողավարութեան նպատակաւոր ոտնձգութիւնները : Անմոռանալի է իր քաջարի մասնակցութիւնը՝ Սսոյ ինքնապաշտպանութեան գործին մէջ :

Ծնած 1867ին Հաճրնի մէջ, նախնական կրթութիւնն ստացաւ նոյն քաղաքի մէջ, և 1888ին զրկուեցաւ Երուսաղէմի Ժառանգաւորացր, ուրկէ 1891ին շրջանաւարտ ելնելով, 1892ին Աւագ սարկաւագ ձեռնադրուեցաւ : Յետոյ վերադարձաւ ծննդավայրը, ուր Ազգ. վարժարանաց ղեկը ձեռք առնելով երկու տարի յաջող շրջաններ բոլորած է : 1894ին վարդապետ ձեռնադրուեցաւ Կիլիկիոյ նոյն ժամանակի կաթող. Տեղապահ Տ. Կիրակոս եպ. էն : Պաշտօնավարած է Կիլիկիոյ զանազան թեմերուն մէջ, բայց իր գործունէութեան ամենէն փայլուն շրջանն եղած է Եօզկատի առաջնորդութիւնը (1899-1901), ուր մեծապէս գործած է Եօզկատցիները, և ուրկէ՝ սակայն՝ դաւաճաններու մատնութեամբ անյուր տանջանքներով Ատանա փոխադրուեցաւ բռնապետութեան օրով և Յամիս բանտարկեալ մնաց : Շատ դժուարութեամբ բանտէն ազատելէ ետքը Սիս աքսորուեցաւ, ուրկէ դուրս ելնել արտօնուած չէր, և ուր որ գնաց անմիջապէս ձերբակալուելով Սիս զրկուեցաւ : Կիլիկիոյ Ծնորդազարդ կաթողիկոսին բնութեան էությունը, Սսոյ վանքի երկտից տեսաչ և մատակարար անուանուեցաւ, և մեծ ձեռնհասութեամբ վարեց այդ պաշտօնը : Արիասիրտ եկեղեցականը կ'աւանդէ իր վերջին շունչը 43 տարեկան առողջ հասակին մէջ, իր մահուամբ զգալի կորուստ մը պատճառելով Կիլիկիոյ աթոռին, ուր տոյքան ոգետք կայ կարող ու Սակաւաթիւս բայց բնորեալ ներկայներ, գործունեայ եկեղեցականներու :

Թուղարկաւորութիւնը կատարուեցաւ չմ. տաւառայ Մայր-Եկեղեցւոյ մէջ, վայելուչ հանդէսով : Պատարագեց Տ. Եղեկիէլ Վ., օծումը կատարեց Տ. Հմայեակ Ա. եպիսկ. Դիմաքսեան, իսկ դամբանակը խօսեցաւ Տ. Գէորգ Արքեպ. Երէջեան : Դամբանականներ խօսեցան նաեւ Տիարք Միսաք Սուրեան և Տիգր. Սիւրմէեան : արցունքով կը հետեւէին զագաղին :

Արցունք մը՝ իր թարմ գերեզմանին, և համբոյր մը իր պաշտելի հոգիին :

ՄԻՅԻՆԿ, Ի ԽՆԴԻՐԸ

Այս շարժումը զբկուեցաւ Ազգ. Վարչութեան շրջաբերականը՝ բոլոր Առաջնորդարաններուն և Թաղ. Խորհուրդներուն, որոնց կը յանձնարարուի առանց բացառութեան, հոգեւոր արարողութիւններէ զուտ, ուրիշ ամէն ճեպակ գումարանց, ընտրութեանց եւ դպրոցական հանդիսներու առջեւ փակ քողով եկեղեցիներ: Եւ ժամանակ էր վճռական հրահանգ մը զրկելու ամէն կողմ, վերջ տալու համար այն ողբալի պատահարներուն որ զանազան թաղերու և քաղաքներու մէջ տեղի կ'ունենային, Շապին Գարահիսարէն մինչև Իգմիր, Պոլիսէն մինչև Եգիպտոս, միթինկամոլ կուսակցականներուն, և Ազգ. Իշխանութեան հեղինակութիւնը, հայրապետական հրամանին անբռնաբարելութիւնը յարգող և ուրիշին ալ յարգել տալու հաստատապէս մտադրած չէզոք, բարեպաշտ, Եկեղեցին պայծառ, դպրոցը կանգուն պահող ճշմարիտ ժողովրդեան միջև: Ժամանակ էր, — և ժամանակն անցած իսկ — այդ հրահանգին. որովհետեւ եթէ Գահիրէի մէջ եղիպա. ոստիկանութեան բարեդէպ միջամտութեան շնորհիւ կարելի եղաւ առաջին տունը ցաւալի հետեւանքներու, և եթէ Բերայի մէջ ամէն գնով միթինկամոլներու դիմադրելու հաստատ առաջադրութիւնը բարեբար ազդեցութիւն մ'ունեցաւ, բանն այնպէս չեղաւ զժառանգարար Իգմիրի մէջ, ուր արիւնք հոսեցաւ վերջապէս. անցեալ կիրակի օրը եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցած կռիւներու միջոցին «Դաշնակցականներու կողմէ սպաննուեցաւ Պ. Գէորգ Բէշիլեան», և վիրաւորուեցաւ Պ. Պօղոս Հալաճեան», Առաջն. փոխանորդ Տ. Յովհ. քնն. Ի. առ Ս. Պատրիարքն սւղղած հեռագրին իսկ համաձայն:

Այսօր օտար մամուլն անգամ բողոքող է եկեղեցիներու մէջ պարզուած ողբալի կռիւներուն դէմ: Լեվանդ Հեքաշ, Եհնի Կազեքա, Թանին հաւասարապէս կը դատապարտեն Աստուծոյ պաշտամունքին նշաններու սրբաւայրերու քաղաքական

կռիւներու թաւար դարձուելուն դէմ: Անգլ. Թերթը յիշեցնելով որ «Բրիտոս տաճարէն կը վանտէր վաճառորդները» զարմանք կը յայտնէ ցարդ ցոյց տրուած ներողամտութեան դէմ, որուն հետեւանքը եղաւ և պիտի ըլլայ զժառանգարար կառավարական միջամտութիւնը, առանց մեր հրաւերին իսկ, Եգիպտոսի մէջ անգլիացի սպան կը բողոքէր Եկեղեցիին նուիրակաւորութեան դէմ եղած թշնամանքին համար, և տխուր հարկին տակ կը գտնուէին ըսելու «ստահակներ» բացառութիւնը, առնոց շարժառիթ եղողներուն նկատմամբ:

Ժամանակ էր որ վճռական հրահանգ մը զրկուէր: Ահաւասակ այնոր պատճէնը. —

ՇԵՋԱՅԵՐԱԿԱՆ

ԱԶԳ. ԿԵՐՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Ժամանակ է մը ի վեր խնդիր կը յուզուի եկեղեցիներու մէջ գումարումներ և բանախօսութիւններ կատարելու մասին, և ինչպէս Պոլսոյ Թաղերէն, նոյնպէս և դաւաճաններէն հրահանգ կը խնդրուի այսպիսի պարագայից մէջ եկեղեցեաց դուռները բանալու կամ ոչ, ծանուցուելով որ այս պատճառաւ վէճեր ու պառակտումներ տեղի կ'ունենան ազգայնոց միջև: Այս խնդիրն հասած ըլլալով նոյն իսկ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխութեան, նորին Վեհափառութիւնն իր Ապրիլ 9 թուականաւ և 886 համար կոնդակաւ հրամայած է արգելուլ միթինկներու գումարումն Եկեղեցիներու մէջ, յայտարարելով թէ Հայոց Ս. Եկեղեցին սպարէզ ու բնմ չէ քաղաքական ու կուսակցական բանախօսութեանց ու պայքարի որոնցմէ, ինչպէս դիտել կուտայ Վհ. Հայրապետը, կը ծագին դժգոհութիւնք, տարաձայնութիւնք և ծայրայեղ արտայայտութիւնք, նսեմացնելով Եկեղեցւոյ վսեմ նշանակութիւնն հաւատացեալ ժողովրդեան և նոյն իսկ օտարաց առջեւ: Յատենի Ազգ. Երեսի. Ժողովոյ Հայրապետական կոնդակը կարդացուելէ ետք՝ Մայր Դիւանի պաշտօնագրով Ազգ. Վարչութեան յղուած ըլլալով ի գործադրութիւն, իսկ ժողովն ուշադրութեան ստաւ Հայրապետական այս

բարձր հրամանը, և նկատելով միանգամայն որ եկեղեցիները սրբավայրեր են՝ հիմնուած ժողովրդեան հոգեւոր պաշտամանց և կրօնական արարողութեանց կատարման համար, և գումարմանց մէկ մասն արգելել և ուրիշները թողաւորի կ'ենթադրէ խտր հաստատել և կրնայ տեղի տալ նորանոր խնդիրներու, հարկ դատեց որ առանց բացառութեան հոգեւոր արարողութիւններէ դուրս ուրիշ ամէն տեսակ գումարմանց, ընտրութեանց և դպրոցական հանդէսներու առջեւ փակ մնան եկեղեցիները: Իսկ միւս կողմէ՝ վասն զի ժողովրդեան չափուց տեսակէտով անօգուտ չեն նկատուիր անոր կրթական և տնտեսական զարգացման նպաստող, յինարար հրահանգիչ բանախօսութիւններ: Եւ առ ժողովը պատշաճ դատեց որ այս կարգի բանախօսութեանց համար կարենան տրամադրուիլ վարժարանաց սրահներն և ուրիշ ազգային յարմար շէնքեր, եթէ կան, հարկ եղած օրինական ձեւակերպութիւնները կատարուելէ ետք: Հետեւաբար այս կարգադրութիւնն հաղորդելով ձեզ, կը յանձնարարենք ըստ այնմ շարժիլ, և աներկմիտ ենք որ մեր ուղղայիններն ևս սիրով պիտի համակերպին սոյն տնօրէնութեան, յարգելով Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին հրահանքը, կրօնական սրբավայրերը պարտ ու պատշաճ յարգանքի մէջ պահելու պարտականութիւնն և հաւատացեալներու կրօնական զգացումները:

Մնամ Աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄԻՍԱԿԱՆ

ԲԱՐԵԱՐԳՈՒԹԻՒՆԲ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կրօնական ժողովն այս օրերս գովելի գործունէութիւն մը ցոյց կու տայ, ամուսնական կամ քահանայական մասնակի խնդիրներէն դուրս հանրային կարեւորութիւն

ունեցող հիմնական խնդիրներով զբաղելով: Նախորդ շաբթուն յանձնաժողով մը կազմած էր՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Կ. Պոլ. Եկեղեցւոյ ամուսնական և ամուսնալուծական օրէնքները ուսումնասիրելու համար: Այս շաբթու աւելի կարեւոր հարցով մը զբաղեցաւ:

Ուշադրութեան առաւ ժողովական Տ. Գնէլ Մ. Վ. Գալէմքարեանի պատրաստած և նախ Եկեղեց. Համագումար ժողովոյ և ապա Մայր Աթոռոյ ներկայելի եկեղեցական-ժիսական բարեկարգութեանց յիշատակագիրը, որուն համամտութիւն յայտնելով ստորագրած են ժողովականներէն Տ. Տ. Յուսիկ, Արէլ, Տաճատ, Սուքիաս, Խորէն և Արինտակէն քննչները: Ժողովը սկզբամբ ընդունելով Տ. Գնէլ Մ. Վ. ի յիշատակագրին առաջարկները, որոշեց զանոնք բաղմագրութեամբ ցրուել բոլոր ժողովականներուն և անոնց կարծիքներն ու առաջարկները անուիլէ յետոյ խնդիրը տանիլ Համագումար ժողովին:

Ահաւասիկ այդ յիշատակագիրը.—

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուրեան
Ազգային Պատրիարք Հայոց Թուրքիոյ
եւ նախագահ Կրօն. Ժողովոյ

Ամեն. Սրբազան Հայր

Մեր Ազգային Եկեղեցին, որուն ինքնուրոյնութիւնը դարաւոր իրողութիւն մ'է: Իր պատմական շրջաններուն մէջ այնքան ժողովրդականացաւ, որքան ըմբռնեց իր ապրած ժամանակի պահանջն ու ջանաց հաւատացեալներու հոգեւոր փափաքներէն ծագած անդիմադրելի պէտքը գոհացնելու: Ասի գիտակից համոզումի մը արդիւնքն էր ինքնին: Վասն զի իբր Քրիստոնեայ հաւատացեալներու հաւաքական մարմին՝ Հայ Եկեղեցին շատ կանուխէն իրաւամբ նկատած էր իր իր նկարագրի մէկ գեղեցիկ կողմն՝ ոյժ տալու պէտքը գործնական բարեպաշտութեան, և իրօք ժիսական, կրօնական կարգ ու սարքին և վարչական կազմակերպութեան գործին մէջ լայն բաժին մը նուիրած էր հաւատացեալ հոգիներէ բղխած միահամուռ բաղձանքներու, ալ

աւելի ժողովուրդին բարեպաշտիկ զգացումներն ամրապնդելու գործնական մտածումով:—Այսպէս, դարերու ընթացքում մեր Եկեղեցին իր հիմնական դաւանանքին ու վարդապետութեանց մէջ միշտ անկախ ու անխախտ մնալով հանդերձ, մասնաւորապէս արտայայտուելու եղանակին մէջ մէջ ընդունեց ինչ որ իր սեպական ժողովրդին բարոյականը կը ցոլացնէր և փոխեալով հոգաւորութիւն մը նուիրեց պէտքն ու պահանջը գոհացնելու մասին: Առ այս պատմութենէն քանի մը օրինակներ բերենք յառաջ:

1. Իր Առաքելական հիմնադրութենէն դարեր անցնելէ վերջը, Հայ Եկեղեցին Ս. դարու սկիզբը լուրջ նկատողութեան առաւ բացարձակ պէտքն որ այլ ևս Հայ Տաճարներու մէջ Ս. Գրքի Ասորական և Յունական լեզուները դադրին բարբառելէ և արձագանգելէ, և բուն իսկ Հայ լեզուն Հայ տառերով խօսի հայ հաւատացեալի հոգւոյն, արդիւնաւորապէս ներշնչելու համար աւետարանական ճշմարիտ կեանքը: Այսքան կարեւոր պահանջի մը հանդէպ գօտեպնդուած, Ազգ. եկեղեցական ու աշխարհական տարրեր, շիրմ և համերաշխ գործակցութեամբ փարեցան Եկեղեցւոյ էական այս պէտքին, և ահա Եկեղեցական և անգլագական Զոյգին՝ Ս. Մեսրոպի և Ս. Սահակի անխոնջ ջանքերուն և տքնաջան աշխատութեանց շնորհիւ, գտնուեցան հայ գիրերն և յաջողութեամբ պատկուեցաւ Հայ Եկեղեցւոյ պահանջքին լիակատար գոհացումը:

2. Եկեղեցւոյ մէջ միօրինակ սաղմոսերգութեանց կրկնումներուն տաղտուկն այնքան խոր ազդած էր հաւատացեալներու վրայ, որ ինքնին սրբազան երաժշտութեան պէտքը ծնաւ, և տակաւ մեր Աստուածաբան ու Քերթող Ս. Հայրերու զրչին արդիւնքով յօրինուեցան գոհար շարականներն իրենց հոգեզմայլ եղանակներով:

3. Ժամանակի հոլովմամբ երբ գաղափարներու զարգացումն և ճաշակնորդն կրթութիւնը տարածուեցաւ նաեւ մեր ժողովուրդին մէջ, հետզհետէ վերջ տրուեցաւ Արեւելքցիի հին սովորութեամբ մուշ-

տակով և կնգուղով պատարագելու դրութեան, որուն ջերմ կուտակից էր մանաւանդ Տուտէորդիական դպրոցի եկեղեցականութիւնը, մինչդեռ համեմատաբար լուսավիտ գաղափարներով զարգացած Կիլիկիան հայ կղերք՝ գլխաւորութեամբ Ս. Ներսէս Լամբրոնացւոյ՝ շատ լաւ ըմբռնեց ժամանակին պահանջը, և արժանաւորապէս ժողովուրդին կիրթ ճաշակը գոհացուց՝ եկեղեցական վայելուչ զգեստեղինաց ձեւն ու գործածութիւնն ինդհանրացնելով:

4. Մեր Եկեղեցւոյ պատմութեան ծանօթ ամէն Հայ երախտագէտ արտիւ կը խոստովանի այն մեծ դերը, զոր Շնորհալին Ս. Ներսէս ունեցաւ եկեղեցական բարեկարգութեան ու բարեղարդութեան գործին մէջ: Տասն և մէկ դարեր ապրող Եկեղեցւոյ մը տօնական-ծիսական կազմակերպութիւնը ԺԲ. դարում բարեփոխուելու պէտքն զգացուց և մեծանուն հայրապետն զայն՝ ըստ ժամանակի պահանջման՝ արժաւորապէս ի գլուխ հանեց. պայծառացնելով Եկեղեցին և ամրացնելով ժողովուրդին սէրն ու բարեպաշտութիւնը:

5. Վերջապէս մեր այսօրուան Տօնացոյցին գալով. անոր ամբողջական կազմութիւնը լրացած է ԺԸ. դարու վերջերք Սիմէոն Կաթողիկոսի հեղինակութեամբը: Հին և նոր Տօնացոյցներու բովանդակութեանց տարբերութիւնն զգալի է յոյժ. այնու որ նոր կամ Սիմէոնեան Տօնացոյցին մէջ յապաւումներ, յաւելումներ և տօներու տեղափոխութիւններ եղած են. պահանջք մը զոր նախընթաց դարը ծնած և զոր Սիմէոն բարեյիշատակ կաթողիկոսն իր բարեկարգիչ ոգևով նկատի առած ու գոհացուցած էր:

Սրբ. Սրբազան Հայր, պատմական այս ակներեւ ճշմարտութիւններն կը բարացուցնեն իսկապէս մեր Ազգային Եկեղեցւոյ ոգին ծիսական ու տօնական կազմութեան վերաբերմամբ:— Իրաւ է թէ Հայ Եկեղեցին Քրիստոնէական վարդապետութեան հիմնական սկզբունքներու ո՛ր և է բարեփոխում չէ կոտարած, ինդհակառակն ինչ որ ընդունած էր Աւետարանէն և Առաքելաներէն, և ինչ որ այդ հիմքերու վրայ Նիկիոյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի տիեզերական երեք

Ս. Ժողովներն վարդապետած ու բանաձեւած էին, զայնս պահեց անփոփոխ ու պէտք է պահէ ընդ միշտ. այլ սակայն իրօք և իրաւամբ ընդունեց բարեփոխումներ արտաքին բովանդակ կազմութեան փոփոխութիւն մէջ: Սոյն այս Եկեղեցին, ուրիշն, պատճառ մը չունի այս քսաներորդ բաղմապահանջ դարու սկիզբը ուշադիր նայուածք մը չնուիրելու բարեփոխման պէտքն յոյժ զգալի դարձած կարգ մը խնդիրներու վրայ, ըստ արժանեղոյն գոհացնելու համար զայնս անշուշտ Ազգ. Եկեղեցական հաւաքական կամքի և օրինական եղանակի բոլոր պայմանները լրացնելու նախանձախնդրութեամբ:

Ուստի հիմնուելով մեր Եկեղեցւոյ յատուկ պատմութեան վրայ, որուն խորապէս հմուտ է Ձեր Բ. Սրբազնութիւնն. և արդի ժողովրդական պահանջներու գոհացումին ժամանակն հասած նկատելով, կուգամ խոնարհաբար Ձեր Ամենապատուութեան և Կեդր. Կրօն. Ժողովոյն առաջողքին բարեփոխման կարօտ իմ նկատած կէտերս, խնդրելով որ առ այս յատկապէս հրաւիրուի Եկեղ. Համագումար Ժողովն ի նիստ, և հոն խորհրդակցելէ յետոյ այդ և ուրիշ այդ կարգի խնդիրներու վրայ, եթէ կան, արդիւնքն յատուկ յիշատակագրով մը մատուցուի յոտս Սրբոյ Էջմիածնի Մայր Աթոռոյ, հոն Ն. Ս. Ստեփանն Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին բարեհաճութեամբ գումարելի համազգային Ժողովոյ նկատման յանձնուելու համար:

Իմ առաջարկներս հետեւեալներն են. —

Ա. Պատշաճ կերպով իրճատել ժամերգութեանց. մկրտութեան, ձեռնադրութեան, պստկի, և Եկեղեցականաց ու աշխարհականաց մեռելական երկարատեւ արարողութիւնները:

Բ. Աշխարհաբար լեզուի վերածել քարոզածեւ ճառերն ու խրատականներն. խնչպէս նաև Պատկի Խորհրդայն բոլոր ընթերցումները:

Գ. Ամէն ատեն արտօնել պսակադրութիւնն, խնչպէս արտօնուած է Եկեղեցւոյ միւս Խորհուրդներուն կատարումը:

Դ. Յապաւել օտար անձանօթ կարգ մը սուրբերուն տօները:

Ե. Մէկ անգամ և եթ տօնել տարւոյն մէջ միւսնոյն սուրբին մէկէ աւելի անգամ կատարուած յիշատակութիւնը:

Զ. Զուտ ազգային տօները ճոխացնել, յատուկ տօնի և յիշատակութեան օր սահմանելով պատմութենէն ծանօթ հայ խոստովանողներու, հաւատոյ անոյեան մարտիրոսներու և ընդհանուր նահատակութեանց համար:

Է. Բարեփոխել Թուրքիոյ Հայոց Եկեղեցական վարժարաններու ծրագիրները, Կրօնական ուսմանց հետ ա՛լ աւելի կարեւորութիւն տալով դարուս պահանջից համապատասխան մտաւորական զարգացման պէտքին:

Ը. Զափաւորել Եկեղեցեաց Ս. Սեղաններու վրայ չափազանց զարդեղինաց և մոմեղինաց շուայլումը:

Եթէ հարկը պահանջէ, Սրբազան Հայր, պատրաստ եմ Համագումար Ժողովոյ մէջ տալ նաև բերանացի բացատրութիւններ, պարզաբանելու համար առաջարկներու մանրամասնութիւնները:

Որդիական աջ համբուրիւ եւ
աւեմնախորին յարգանքով

Անդամ Կեդր. Կրօն. Ժողովոյ
ԳԵՂԵՍ. ՎՐԴ. ԳԱԼԵՍԵԱՐԵԱՆ

21 Յուլիս 1910

Դատրդիւ Ս. Թագաւոր Եկեղեցի

Վերոնշանակեալ առաջարկութեանց կատարելապէս համամիտ ըլլալնիս յայտարարելով կ'ստորագրեմ:

Անդամ Կեդր. Կրօն. Ժողովոյ
ԱՐԻՍՏԱԿԵՍ ԲԶՆՅ. ՀԻՍԱՐԼԵԱՆ, ՍՈՒՔԻԱՍ
ԲԶՆՅ. ՊԱԼԸՔԱԶԵԱՆ, ԽՈՐԷՆ ԲԶՆՅ. ՅԱՐՈՒԹԻԿԵԱՆ,
ՅՈՒՍԻԿ ԲԶՆՅ. ՔԱԶՈՒԵՐ, ԱՔԷԼ
ԲԶՆՅ. ԵՐԷՅԵԱՆ, ՏԱԶԱՏ. ԲԶՆՅ. ՓԱՇԱՅԵԱՆ

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆ. ի նիստին մէջ
զբաղեցաւ նաև հետեւեալ խնդիրներով. —

1. Որոշեց և խնդրեց Ամեն. Ս. Նախագահէն՝ Տ. Մատթ. վրդ. Խոճէեանի ծայրագունութեան պատիճան տալ յառաջիկայ կիրակի, իր ձեռնադրուած Սկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ՝ Զմիւռնիոյ առաջնորդութեան կոչուելուն առթիւ: (Տ. Մատթէոս Վ. Իզմիրի գործե-

բուն խառնակ վիճակին պատճառաւ փութով իր պաշտօնավարը պիտի երթայ: 2. Որոշեց գրել Բերայի աւագ երէցին որ քննէ և որոշէ թէ իրա՞ւ է որ Բերայի քահանաներէն Տ. Սահակ քնն. Փափազեան բանափօսութեանց խնդրոյ առթիւ ժողովուրդին մէջ երկպառակութեան սերմեր կը ցանէ, և ընդհուպ տեղեկագրէ քննութեան արգիւնքը: 3. Ռոստոխովի խառն ժողովոյ բարի վկայութեանց վրայ՝ ժողովը որոշեց աւագութեան պատիւ ու տիտղոս տալ վիճակին Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող քնն. Թագրմեհանի Պատր. Կոնդակով: 4. Յովհաննէս սարկաւազ Ուշէնեան գիրով կը յայտնէր թէ հարկադրուած է քաջուկ կուսակրօն եկեղեցականութենէ: Ժողովը բառ այսմ կտրգաթող և կարգադրոյ՝ հռչակեց զայն: 5. Երգիւտարնակ Տ. Սիմոն Սարգիսեանի ամուսնաբնական մասին վերջնական կարգադրութիւնը ժողովը Երգիւտարի առաջնորդին յանձնեց:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԷ՛ ԴՆ. օրը ի մէջ այլոց զբաղմեցաւ հետեւեալ խնդիրներով. — Ս. նախագահը հաղորդեց ժողովին՝ Զմիւռնիոյ Առաջնորդարանի հեռագիրը, որ կը գուժէր անցեալ կիրակի օր եկեղեցւոյ չըջափակին մէջ տեղի ունեցած աղետալի դէպքը: Խառն ժողովը մեծապէս զգածուած իր խորին ցաւը յայտնեց տեղի ունեցած անկարգութեանց և արիւնահեղութեանց համար, և որոշեց դէպքին պարագաներուն վրայ Առաջնորդարանէն լիակատար տեղեկութիւն պահանջել: Միւս կողմէ Խառն ժողովը Ս. նախագահին յանձնեց իր Պատրիարքական հեղինակութեամբ հրաւէր կարգալ որոց որ անկ է, որպէս զի հոգ տանին խախտելու այսպիսի եղբայրասպան վէճերու վերադարձը: Ասկէց զատ պատշաճ դատուեցաւ որ հայ լրագրագետներն ալ խոհականութեան յորդոր կարգան ազգայնոց և զգացնեն աչն դառն հետեւանքները՝ որ կրնան ծագիլ զրգուռմեհիւրէ և վտանգել ազգին շահերն ու խաղաղութիւնը: — Մայր Դիւանը Ազգ. ժողովի որոշման համաձայն հաղորդած էր Տ. Վահան Թէքեանի մէկ հարցագիրը՝ որով տե-

ղեկութիւն կը խնդրուէր այն հրատարակութեանց մասին թէ Պատր. Փոխանորդը վարձատրութիւն մը խնդրած ըլլայ Նպաստից մետուկէն, և թէ Ժողովին քանաձեւին համաձայն խնդրը կը յանձնէր Խառն ժողովին ուշադրութեանը: Ժողովը ուշադրութեան առաւ խնդիրը, և լսեց Ն. Գե. րապատուութեան բացատրութիւնները, և նոյն իսկ տեսաւ այս մասին Նպաստից յանձնաժողովի քարտուղարին ուղղուած գրութիւնը, և կատարելապէս համոզուած ունեցուց թէ Փոխանորդը իր քրոջ հիւանդութեան ճգնաժամին մէջ նիւթապէս ու բարոյապէս ընկճեալ, տեղի ունեցած առաջարկութեան մը վրայ, թելադրուել է Նպաստից մետուկէն նուէր խնդրելու, զոր սակայն չէ ստացած, և թէ զեղծարար ընթացք ընտել ունեցած չէ, մանաւանդ իր անշահախնդրութիւնը ազայցուցեալ է Օսմ. Մանանադրութեան հրատարակութեան առթիւ հազարաւոր գաղթականաց տրուած առօրեայ Նպաստից հաշիւներէն, որոնց ճշտութիւնը ստուգուած է Տնտես. Խորհրդոյ քննութեամբ: Հետեւաբար Խառն ժողովը նկատի առնելով Ն. Գե. րապատուութեան երկու տարիէ ի վեր ունեցած բարոյք պաշտօնավարութիւնը, բարոյապէս և նիւթապէս քաջալիրանաց արժանի դասեց զինքը, և որոշեց իր քննութեան արդիւնքը տեղեկագրել Ազգ. ժողովին:

— Զօնկուլտաքի Թագ. Խորհուրդը յայտնելով թէ «միւլք» գետին մը գնուած է եկեղեցիի և դպրոցի շինութեան համար՝ ծախուց մասին հանգանակութեան համար ժապաւինեալ տոմար մը կը խնդրէր: Ժողովը որոշեց այդ տոմարը տալ, քանի որ Տնտես. Խորհուրդը իր քննութիւնները կատարեմէր, պայմանաւ որ հանգանակութիւնը կտատարուի տեղւոյն մէջ և դուրսէն ղիմով ըլլայ միայն այն ազգայնոց որ գործով յարաբերութիւն ունին Զօնկուլտաքի հետ: (Զօնկուլտաքի Տ. Տաճատ քնն. որ այս խնդրոյն առթիւ երեք չարաթէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, չարթուն իր պաշտօնատեղին դարձաւ):

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆԵ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԳԶՆԵ. ԿԷՋԻԻՐԵԱՆ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զաւմաֆճըլար, Յակոբեան խան

THE GARDEN OF THE

THE GARDEN OF THE

- | | |
|----------------------|----------------------|
| 1. The Garden of the | 1. The Garden of the |
| 2. The Garden of the | 2. The Garden of the |
| 3. The Garden of the | 3. The Garden of the |
| 4. The Garden of the | 4. The Garden of the |
| 5. The Garden of the | 5. The Garden of the |
| 6. The Garden of the | 6. The Garden of the |
| 7. The Garden of the | 7. The Garden of the |
| 8. The Garden of the | 8. The Garden of the |



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմքեարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմիսն
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլզճեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Դրիգոր Բնյ. Ծէպէճեան

